Azg Վազգ

14 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2005 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 228 (3394)

Այսօր Երեւան կժամանեն ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները

ԵՐԵՎԱՆ, 13 ԴԵԿՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Դեկտեմբերի 14-ին Երեւան կժամանեն ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները՝ Յուրի Մեզյյակովը (Ռուսաստան), Սթիվեն Մանը (ԱՄՆ), Բեռնար Ֆասիեն (Ֆրանսիա): Երկօրյա այցի ընթացքում հանդիպումներ են նախատեսվում ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանի, արտգործնախարար Վարդան Օսկանյանի հետ: Երեւանում նախատեսվում է նաեւ Մինսկի խմբի համանախագահների հանդիպումը ԼՂՀ նախագահ Արկադի Ղուկասյանի հետ:

Ադրբեջանական լրատվամիջոցների հաղորդմամբ, համանախագահները Բաքու կմեկնեն դեկտեմբերի 15-ի երեկոյան: Դեկտեմբերի 16-17-ը ծրագրվում են համանախագահների հանդիպումները Ադրբեջանի ղեկավարության հետ: Համանախագահներին կուղեկցի ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցիչ, դեսպան Անջեյ Կասպրշիկը:

Եվրամիությունը Հարավային Կովկասի երկրների հետ քաղաքական երկխոսություն կսկսի միաժամանակ

Խավիեր Սոլանան հանդիպել է Հայաստանի, Ադրբեջանի եւ Վրաստանի արտգործնախարարներին

ԹԱԹՈՒԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

Երեկ Բրյուսելում տեղի է ունեցել Հայաստան-ԵՄ նախարարական «տրոյկայի» հանդիպումը: Հայկական պատվիրակությունը գլխավորում էր արտգործնախարար Վարդան Օսկանյանը, իսկ եվրոպական կողմը՝ ԵՄ ընդհանուր արտաքին եւ անվտանգության քաղաքականության հանձնակատար Խավիեր Սոլանան: Ըստ ՀՀ ԱԳՆ մամլո հաղորդագրության, հանդիպմանը մասնակցել են նաեւ Եվրահանձնաժողովի արտաքին հարաբերությունների գլխավոր տնօրենի տեղակալ Կարել Կովանդան, Հարավային Կովկասում ԵՄ հատուկ ներկայացուցիչ Հեյկի Տալվիտիեն եւ Հարավային Կովկասում Մեծ Բրիտանիայի հատուկ ներկայացուցիչ Բրայան Ֆոլը:

Հանդիպմանը քննարկվել են եվրոպական հարեւանության քաղաքականության շրջանակներում երկկողմ փոխգործակցությունը, դարաբաղյան հակամարտության, հայ-թուրքական հարաբերությունների, Հայաստանի էներգետիկ առաջնահերթությունների, մասնավորապես Մեծամորի ատոմակայանի խնդիրները: Երեկ Խավիեր Սոլանան աշխատանքային հանդիպում է ունեցել նաեւ Հայաստանի, Ադրբեջանի եւ Վրաստանի արտգործնախարարների հետ, որի ընթացքում քննարկվել են տարածաշրջանային հակամարտությունների կարգավորման հարցերը:

Տես էջ 8

ՕՐՍԽԵԳԻՐ

Ներգաղթող հայաստանցիները տառապում են խղճուկ աշխատավարձից

Նրանց հայացքն էլի ուղղվում է դեպի դուրս

ՌՈՒԶԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

38-ամյա Մարիամի ամուսինը երեք տարի Մոսկվայում աշխատելուց հետո այս տարվա գարնանը որոշեց վերադառնալ, որովհետեւ այլեւս անկարող էր դիմանալ 3 դստեր ու կնոջ կարոտին: Սկզբում կարծես գոհ էր, մեքենա գնեց ու որոշես առաքիչ աշխատանքի անցավ «Լուսակերտ» ընկերությունում: Բայց... ընդամենը 6 ամիս անց համոզվեց, որ նյութական դժվարություններն օր-օրի աճում են այստեղ 4 անգամ պակաս աշխատավարձ ստանալու պատճառով: Հայոց լեզվի ուսուցչուհի Մարիամը ստանում է 33 հազար դրամ աշխատավարձ, իսկ ավագ դուստրն այս տարի ճնշեսագիտական համալսարանի ուսանողուհի դարձավ, պետք է հոգալ նաեւ նրա ուսման վարձը: Երկար մտածումներից հետո միակ ելքը գնած մեքենան վաճառելն ու նոյեմբերին նորից Մոսկվա մեկնելն էր: «Մեզ նման մարդիկ չեն կարող Հայաստանում նորմալ ապրելու մասին մտածել, երեխայի ուսման վարձ վճարել: Ինչքա՞ն պետք է դիմանանք մի կերպ, հազիվհազ ծայրը ծայրին հասցնելուն: Ինձ այստեղ պահողը 9-րդ դասարանցի Գոհարիկս է, սպասում եմ դպրոցն ավարտի ու մեկնենք Մոսկվա: Այստեղ երեխաներիս համար ոչ մի հեռանկար չեմ տեսնում, համալսարանն ավարտելուց հետո էլ աշխատանքի խնդիրներ պիտի ունենան ու չկարողանան իրենց նվազագույն կարիքները բավարարել», ասում է Մարիամը:

Արտագաղթի մասին վերջին ժամանակներս մեզանում ավելի քիչ է խոսվում, այս խնդիրն ավելի պակաս մտահոգիչ է համարվում, չնայած մեզ շրջապատող մարդկանցից հաճախ ենք լսում, որ մեկի եղբայրն է մեկնել Ռուսաստան ու վերադառնալու մտադրություն չունի, մյուսի բարեկամի ընտանիքն է տեղափոխվել Մոսկվա, երրորդինը՝ Կանադա, չորրորդինը՝ Իսպանիա եւ այլն:

Տես էջ 8

Թողարկվել են 15 տարվա մարման ժամկետով պետական պարտատոմսեր

Ինչպես տեղեկացանք ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարության լրատվական ծառայությունից, պետական պարտատոմսերի ուկայի 10-ամյա պատմության ընթացքում դեկտեմբերի 13-ին առաջին անգամ թողարկվեցին 15 տարվա մարման ժամկետով պետական արժեկտրոնային պարտատոմսեր: Թողարկման վերաբերյալ ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարությունը հայտարարել էր դեռեւս 2005-ի հունվար ամսին՝ հրապարակելով տարվա ընթացքում երկարաժամկետ պարտատոմսերի բոլոր չորս թողարկումների օրացույցը: Ըստ նախարարության, արդեն տեղաբաշխվել էին նախորդ երեք թողարկումները 8 տարի, 10 տարի եւ 12 տարի մարման ժամկետներով, որոնց նկատմամբ պահանջարկը գերազանցում էր մոտ 3 անգամ: Լրատվական ծառայությունից նաեւ տեղեկանում ենք, որ դեկտեմբերի 13-ի աճուրդում գրանցվել են 15 տարի մարման ժամկետով պետական պարտատոմսերի տեղաբաշխման հետեւյալ արդյունքները. տեղաբաշխման ծավալը կազմել է 1 160 մլն դրամ, միջին եկամտաբերությունը՝ 8.82%, առավելագույն բավարարված եկամտաբերությունը՝ 10.0%:

Ա. Մ.

Անանախադեպ վիրահատություն Երեւանի «Սուրբ Աստվածամայր» մանկական բժշկական կենտրոնում

Անանախադեպ վիրահատություն է կատարել Երեւանի «Սուրբ Աստվածամայր» մանկական բժշկական կենտրոնի բուժանձնակազմը՝ տնօրեն Նիկոլայ Դալլաքյանի գլխավորությամբ, տեղեկացնում է «Ար» հեռատեսընկերությունը: Առաջին անգամ մեր բժիշկները հաստ աղիքի աշխատանքին ստեղծել են արհեստական շրջակապող եւ վերակառուցել շնչափող: Այդպիսի վիրահատության է ենթարկվել Գեղարքունիքի մարզի Ավազի տարածաշրջանի Կարմիր գյուղի բնակիչ, 10-ամյա Վահագն Հարությանը: Նա «Սուրբ Աստվածամայր» հիվանդանոց էր տեղափոխվել երեքշաբթի տարվա հունվարի 12-ին: Բժիշկները պարզել են, որ երեխայի շնչափողի եւ կերակրափողի վրա կա անհին վնասից սպառնացող ուռուցքաձեւ գոյացություն: Վահագնին երկու ամիս տվել է արհեստական շնչառություն, կատարվել են բազմաթիվ էնդոսկոպիկ վիրահատություններ: Հիվանդը չի կարողացել օգտվել կերակրափողից: 11 ամիս հիվանդանոցում գտնվելուց եւ բազմաթիվ բուժզննումների ենթարկվելուց հետո փոքրիկի կյանքին այլեւս վտանգ չի սպառնում, քանի որ մի քանի օր առաջ նա ենթարկվել է վիրահատության, որն իր տեսակի մեջ համարվում է եզակի վիրահատություն:

Ըստ «Սուրբ Աստվածամայր» կենտրոնի տնօրեն Նիկոլայ Դալլաքյանի, առաջին անգամ է մեր երկրում հաստ աղիքից կերակրափող ստեղծվել: Հետեւաբար պարոն Դալլաքյանն այս նորարար վիրահատությունը համարում է առողջապահության ոլորտի 2005 թ. գլխավոր ձեռքբերումներից մեկը:

Ներգաղթյալներն ամեն մի հասարակության շարժիչ ուժն են

«Ռոսբալթ» գործակալության հարցազրույցը Արա Աբրահամյանի հետ

Ռուսաստանի հայերի միության նախագահ, Համաշխարհային հայկական կոնգրեսի նախագահ Արա Աբրահամյանը դարձել է Ռուսական կենսագրական ինստիտուտի «Տարվա մարդ-2005» մրցանակի դափնեկիր: Դրանով իսկ նշվել է նրա եռանդուն մասնակցությունը նավթի մատակարարման մեղադրանքով Նիգերիայի բանտում հայտնված ռուսաստանցի նավաստիների ազատագրմանը: Դեկտեմբերի 7-ին Մոսկվայի Քրիստոս Փրկչի տաճարում ելույթ ունենալով մրցանակի հանձնման արարողության ժամանակ, ՅՈՒՆԵՍԿՕ-ի բարի կամքի դեսպան Արա Աբրահամյանը ներկաներին խոստացավ «ամեն ինչ անել, որպեսզի ռուսաստանցի նավաստիները Նոր տարում վերադառնան իրենց ընտանիքներ»: Այդ իրադարձությունից մի քանի օր առաջ նա ծավալուն հարցազրույց էր տվել «Ռոսբալթ» գործակալությանը:

- Պրն Աբրահամյան, ռուս նավաստիներին օգնելիս Ձեր դրսեւորած ակտիվությունը ռուսաստանյան դիվանագիտության թերամբակվածությա՞ն հետեւանքն էր: Ներկայումս փոխվո՞ւմ է արդյոք Ռուսաստանի վերաբերմունքն ուրիշ երկրներում օրհասական վիճակում հայտնվող իր քաղաքացիների հանդեպ:

- Ռուսաստանի դիվանագիտությունը եւս այսօր վերականգնվում է խորհրդային պետության փլուզումից հետո: Եղավ մի ժամանակահատված, երբ ԱԳՆ-ից հեռանում էին աշխատակիցները, ոչ ոք չէր ուզում դիվանագիտական կորպուսում ծառայել խղճուկ աշխատավարձերի պատճառով: Այնտեղ կադրային սով էր, եւ դիվանագետները գոյատեւում էին այնպես, ինչպես Ռուսաստանի ամբողջ բնակչությունը: Նրանք հեռու էին ազգային շահերի ակտիվ պաշտպանությունից, մանավանդ որ պետությունը շատ թույլ եւ ոչ այնքան հասկանալի կերպով էր ձեւակերպում այդ ազգային շահը:

Ներկա պայմաններում ռուսաստանյան դիվանագիտությունը սկսել է գործել առավել ակտիվորեն: Պետությունը վերականգնել է սուբյեկտի իր կարգավիճակը: Բայց այնպիսի հարցեր, ինչպիսիք են Նիգերիայում ռուս նավաստիների կամ Հասարակաց Գվինեայում հայ օդաչուների ճակատագիրը, չեն լուծվում զուտ դիվանագիտական միջոցներով: Այստեղ պահանջվում է այլ ուժերի, կառույցների, հաստատությունների եւ մարդկանց մասնակցություն, որոնք դուրս են պաշտոնական դիվանագիտությունից: Ահա թե ինչու իմ միջազգային կապերը եւ շփումները շատ օգտակար եղան Հասարակաց Գվինեայից հայ օդաչուների ազատագրման, իսկ հիմա էլ ռուս նավաստիների ճակատագրին առնչվող բարդ խնդիրը լուծելու համար:

Տես էջ 4

ԸՆԹԱՑԻԿ

ՀԿ-ՁԼՄ համագործակցությունը գրեթե կայացած չէ

Գիտակցում են երկու կողմերն էլ, սակայն անելիքը դեռևս հսկայակ չէ

«Մեր հեռուստաընկերությունները զարգացման ճանապարհին չեն, դրա համար չկան ֆինանսական համապատասխան միջոցներ», այս կարծիքին է Հայկական 2-րդ հեռուստաալիքի փոխտնօրեն, մեկնաբան Արամ Սաֆարյանը: Նա ներկայացնում է հարեւան Վրաստանի օրինակը, որտեղ հեռուստաընկերությունների գովազդի մեկ րոպեն տասնվում է 1000-2000 դոլարի սահմաններում, եւ նշում, որ այս թվերն անհամեմատ տարբերվում են հայաստանյան իրականությունից:

Գովազդից բացի հայաստանյան մասնավոր հեռուստաընկերությունները ֆինանսներ են ստանում նաեւ հասարակական կազմակերպությունների «PR»-ը կազմակերպելու համար: Այս եւ հասարակական կազմակերպությունների ու լրատվամիջոցների համագործակցության արդի վիճակին եւ զարգացման հեռանկարներին էր նվիրված երեկ «Եվրոպական ինտեգրացիա» ՀԿ-ի կազմակերպած սեմինարը:

Արամ Սաֆարյանն իր խոսքում նշեց, որ հայաստանյան առաջին տասը հեռուստաընկերություններն ունեն «բարեկամ հասարակական կազմակերպությունների» շրջանակ, որոնց գործունեությանն անդրադառնում են տարվա ընթացքում՝ դրա դիմաց ստանալով ֆինանսական այն միջոցները, որ նախատեսված են իրենց դրամաշնորհային ծրագրերում: «Ազգի» հարցին, թե արդյոք դա չի՞ նշանակում, որ այդպիսով արեւմտյան կամ եվրոպական դոնոր կազմակերպություններն են որոշում հայաստանյան հասարակական դաշտի այս կամ այն կառույցի կարեւորությունը եւ համապատասխան կազմակերպությանը եթերի հնարավորություն տալիս, պրն Սաֆարյանը պատասխանեց. «Իրոք, այն կազմակերպությունը, որն ունի դրամաշնորհային լուրջ ծածկույթ, եթերի ավելի մեծ հնարավորություն ունի, սակայն սա միայն մասնավոր հեռուստաընկերություններին է վերաբերում: Հանրայինի դեպքում խնդիրն ու պահանջներն այլ են»: Նա նշեց, որ նույնիսկ նախորդ տարեվերջին այնքան մեծ էր խոշոր դրամաշնորհ ունեցող կազմակերպությունների թիվը, որ չկար բոլորին եթեր տրամադրելու հնարավորություն, եւ մասնավոր հեռուստաընկերություններն ընտրության առջեւ էին կանգնել:

Շարունակելով հարցի պատասխանը, մյուս բանախոսը՝ Երեւանի մամուլի ակումբի նախագահ Բորիս Նավասարդյանն ավելացրեց, որ գնալով տեղացի մեծահարուստները, քաղաքական գործիչները եւ իշխանություններն ավելի մեծ գումարներ են հատկացնում ՀԿ-ներին, արդյունքում հեռուստաեթերի հնարավորություն են ունենում իշխանությունների համար առավել ընդունելի կազմակերպությունները: Ըստ բանախոսի գնահատականի, մեր երկրում լրատվամիջոցների եւ ՀԿ-ների միջեւ առկա հակասությունը պատճառ է դրանց տարբեր սկզբնավորումների: Եթե առաջինները զուտ տեղական ծնունդ ունեն, ապա երկրորդները մեծ մասամբ ստեղծված են միջազգային դոնոր կազմակերպությունների միջոցներով կամ դրանցից ֆինանսներ ստանալու ակնկալիքով: Դրանց համագործակցությունն, իհարկե, դեռեւս չի կայացել: Նա նշեց, որ շատ ՀԿ-ներ արտերկրում թյուր կարծիք են տարածում մեր երկրում գործող լրատվական դաշտի մասին՝ հավաստիացնելով, թե վերջիններս զուրկ են քաղաքականությունից, հետեւաբար ենթարկվում իմիջիայնությանը եւ պրոֆեսիոնալ չեն:

Ի տարբերություն այս երկու բանախոսների, «Եվրոպական ինտեգրացիայի» նախագահ Կարեն Բեֆարյանը նախընտրեց ոչ թե թեմայի շուրջ իր կարծիքը ներկայացնել, այլ խոսել իր կազմակերպության եւ «Ազգ» օրաթերթի միջեւ եղած հակասության մասին, որն արդեն չորս ամսվա պատմություն ունի: Սեմինարին մասնակից ՀԿ-ների եւ լրատվամիջոցների ներկայացուցիչները, գրեթե անտեղյակ խնդրին, սփոփված էին ունկնդրել Բեֆարյանի գնահատականները նշված հակասության վերաբերյալ, ի դեպ նույն՝ միակողմանի կեցվածքով, ինչում մեղադրվում էր օրաթերթը, իսկ ոմանք՝ պարզապես կիսաս թողնել սեմինարն ու լքել սրահը:

Ընթերցողներին տեղեկացնենք, որ հակասության առիթ դարձած հրապարակումներին կարող են ծանոթանալ մեր օրաթերթի նախորդ համարներում («Ազգ» 17 օգոստոս, 2005, 23 օգոստոս, 2005, 09 դեկտեմբեր, 2005): Նշենք, որ ՀՀ տնտեսական դատարանի նոյեմբերի 3-ի որոշումով «Եվրոպական ինտեգրացիա» հասարակական կազմակերպության կողմից ԱՄՆ Առեւտրի եւ զարգացման գործակալության (USTDA) դրամաշնորհի գումարների պահումը արդարացի ճանաչելու հետեւանքով նոյեմբերի 28-ին «Եվրոպական ինտեգրացիա» կազմակերպությանը պարտադրվել էր դադարեցնել ամերիկյան «Սիայ Բրոդբենդ» ինկորպորացիային եւ բռնագանձվել էր տույժ՝ գումարի վերադարձի ձգձգման համար: Այսպիսով, «Եվրոպական ինտեգրացիան» մտացածին պատճառներ է փնտրում՝ դատարանում սեփական պարտությունն արդարացնելու համար եւ օրաթերթին մեղադրում իր «հակառակորդի» խարդախությունն իրականացնելու գործում: Լավ կլիներ, որ միջոցառման կազմակերպիչները հարգեին հրավիրվածների ժամանակն ու նախօրոք հայտարարեին, թե սեմինարը երկու՝ իրարից անկախ թեմաների է անդրադառնալու: Պրն Բեֆարյանի արծարծած հարցն, ի դեպ, գրեթե հետաքրքրություն չառաջացրեց ներկաների մոտ եւ ընդհատման 2 ժամերին որեւէ մեկն այլեւս չանդրադարձավ դրան:

Խմբ. կողմից.- Ինչ վերաբերում է պրն Բեֆարյանի այն հայտարարությանը, թե վերոհիշյալ գործում «Ազգը» «շահ է հետապնդում իրականությունը միակողմանի ներկայացնելով», ապա ասենք, որ, իրոք, մեր թերթն այս հարցում շահագրգիռ մոտեցում ունի, քանզի վերոհիշյալ դրամաշնորհը տրվել էր մեր երկրում տիեզերական խոշոր հետազոտություններ կատարելու նպատակով, որից շահելու էր մեր գիտությունը:

Սա՛ էր մեր շահը: Իսկ թե ձգձգման մարտավարությամբ ի՞նչ եւ ո՞ւմ շահն էր հետապնդում «Եվրոպական ինտեգրացիա» ՀԿ-ն, դա արդեն ժամանակը ցույց կտա:

ԹԱՄԱՐ ՄԻՆԱՍՅԱՆ

«Աստծո խոսքը»՝ եկեղեցիների փոխհասկացողության գրավական

Երեկ ԵՊՀ աստվածաբանության ֆակուլտետի սրահում Հայաստանի աստվածաշնչային ընկերությունը առաջա աստվածաբան ուսանողների, Հայաստանում ներկա ավանդական մյուս եկեղեցիների հոգեւոր այրերի մասնակցությամբ նշեց «Աստծո խոսքը» փաստաթղթի ընդունման 40-ամյակը: Այն ընդունվել է 1962-65 թթ. կայացած վատիկանյան Բ ժողովի ընթացքում եւ բեկումնային է նկատվում ոչ միայն Կաթողիկե եկեղեցու, այլեւ նրա հետ հարաբերություններ ունեցող եկեղեցիների եւ կազմակերպությունների համար: Ինչպես նշեց Հայ առաքելական եկեղեցու սարկավագ Հրաչ Սարգսյանն իր զեկուցման մեջ, այս փաստաթուղթը հնարավորություն է տալիս կաթոլիկներին գիտակցորեն ընթանալու եւ ուսումնասիրելու Աստվածաշունչը, որպեսզի այն ավելի մատչելի դառնա հավատացյալ ժողովրդին:

«Աստծո խոսքը» կարեւորեց նաեւ Մայր աթոռ Սբ. Էջմիածնի միջեկեղեցական հարաբերությունների բաժնի պատասխանատու, Հայաստանի աստվածաշնչային ընկերության խորհրդի նախագահ Եզնիկ եպս. Պետրոսյանը. «Վատիկանի Բ ժողովը եւ այս փաստաթուղթը հիմնովին վերափոխեցին կաթոլիկ եկեղեցին, ամրագրելով նրա վերաբերմունքն Աստվածաշնչի նկատմամբ: «Աստծո խոսքը» կաթոլիկ եկեղեցու ե՛ւ ներքին, ե՛ւ արտաքին կյանքում փոփոխություն մտցրեց: Իսկ քանի որ արտաքին կյանքում մենք կապված ենք կաթոլիկ եկեղեցու հետ, այդ իմաստով այն կարեւոր է նաեւ մեզ համար՝ որպես Քրիստոսի եկեղեցու մասի: Փաստաթուղթը նպաստում է, որ տարբեր եկեղեցիների միջեւ դրական փոխհասկացողություն եւ ավելի ջերմ հարաբերություններ լինեն: Այդ իմաստով այն տանում է եկեղեցիներին դեպի միություն: Դրա համար Հայաստանի աստվածաշնչային ընկերությունը նախաձեռնեց այս միջոցառումը՝ մինչ այդ կատարելով նաեւ փաստաթղթի թարգմանությունը եւ տպագրությունը հայերենով: Այս գրքույկը մի տեսակ լուսաբանություն է մեր հասարակության համար: Չեմ կարծում, որ «Աստծո խոսքը» միայն կաթոլիկ եկեղեցու հավատացյալների համար է, այլեւ բոլոր քրիստոնյաների», ասաց Եզնիկ սրբազանը:

ՍՈՒՍԱՆՆԱ ՄԱՐԳԱՐՅԱՆ

Դեկտեմբերի 18-ին մեր կայքէջի հյուրն ԱԺ նախագահ Արթուր Բաղդասարյանն է

Ինչպե՞ս ազդեցին այս տարի Ազգային ժողովը, արդյոք կոալիցիայում հակասություններ կա՞ն, ինչպիսի՞ն կլինի քաղաքական 2006 թ.-ը, այս եւ մեր ընթերցողների այլ բազմաթիվ հարցերին երկուշաբթի, դեկտեմբերի 18-ին մեր կայքէջում կպատասխանի ԱԺ նախագահ Արթուր Բաղդասարյանը:

ՀԱՄՈՒՐՈՆ ԲԱՆԱՎԵՃ

«Քրադկովն ով ա, որ գազի գին որոշի» եւ նոր գազամուղ Ադրբեջանից

Հատվածներ գազի սակագների հնարավոր բարձրացման մասին բանավեճից

Գազի սակագների հնարավոր թանկացումն ու հետեւանքները Հայաստանի տնտեսության մեջ: Այս թեմայի շուրջը երեկ հերթական բանավեճն էր կազմակերպել «Հայելի» ակումբը, որին հրավիրված էին առեւտրի եւ տնտեսական զարգացման փոխնախարար Գագիկ Վարդանյանը եւ վիճակագրության ծառայության նախկին պետ Էդուարդ Աղաջանովը:

Ռուսաստանը աշխարհին վախեցնում է էներգետիկ մահակով այնպես, ինչպես Խորհրդային Միությունը՝ միջուկային մահակով: Ռուսաստանի կողմից գազի սակագների բարձրացմանն այսպիսի գնահատական տվեց Էդուարդ Աղաջանովը: Վստահությամբ նշելով, որ Հայաստանի համար այդ սակագները դառնալու են 110 դոլար, Ռուսաստանի նման քայլը Հայաստանի նկատմամբ նա համարեց «գցոցի» կամ էլ բանսաժ: Չի կարելի միանգամից կրկնակի բարձրացնել գազի սակագները, ընդգծեց ելույթ ունեցողը:

Ռուսաստանն, ըստ Էդուարդ Աղաջանովի, Թուրքմենստանից գազը գնում է 44 դոլարով, եւ ինքը համաձայն կլինի, եթե գազը Հայաստանին վաճառվի 70 կամ 80 դոլարով, ինչի դեպքում «Գազպրոմի» շահույթը կկազմի 36 մլն դոլար կամ 22 տոկոս: Ռուսաստանին ուղղված բանախոսի մյուս մեղադրանքն այն էր, որ Ռուսաստանը չի թողնում, որ Հայաստանը դառնա տարանցիկ երկիր:

Գագիկ Վարդանյանի կարծիքով, այս քննարկումը փոքր-ինչ շուտ է կազմակերպվել: Այդուհանդերձ, գազի սակագների բարձրացումը, նրա համոզմամբ, հարկ է դիտարկել նավթի միջազգային գների աննախադեպ բարձրացման համատեքստում, քանի որ նավթի գների բարձրացմանը հաջորդում է գազի գների բարձրացումը: Ինչ վերաբերում է Ռուսաստանին, ապա, փոխնախարարի հավաստմամբ, շուկայական գնագոյացում գազի ոլորտում չկա, չնայած 2000 թ.-ից Ռուսաստանը տարեկան 20 տոկոսով բարձրացնում է գազի սակագները: Սակայն Հայաստանն ունի էներգետիկ անվտանգության ռազմավարություն, որի նպատակն է բարձրացնել մեր երկրի էներգետիկ անվտանգությունը: Այդ առումով Գագիկ Վարդանյանը կարեւորեց Իրան-Հայաստան գազամուղի կառուցումը, համարելով Հայաստանի դիվանագիտության լուրջ հաջողությունը, Աբովյանի գազապահեստարանների կառուցումը: Այս քայլերն իրականացնելով, 2007 թ.-ին Հայաստանը կունենա էներգետիկ անվտանգության ավելի բարձր վիճակ: Միաժամանակ փոխնախարարը մեկ այլ անսպասելի տարբերակ հնարավոր համարեց, չբացառելով, որ քաղաքական խնդիրների լուծումից հետո եւս մեկ գազամուղ Հայաստան մտնի Ադրբեջանից:

Քննարկումն առավել թեժ էր Հայաստանը գազի տարանցիկ երկիր դարձնելու հարցում: Էդուարդ Աղաջանովը նշեց, որ Վրաստանը ցանկանում էր, որպեսզի Իրան-Հայաստան գազամուղը կառուցվի 1200 կամ 1500 մմ խողովակով եւ հասցվի մինչեւ Վրաստանի սահման, հետագայում այլ երկրներ տեղափոխվելու համար: Մինչդեռ կառուցվեց 700 մմ խողովակներով միայն Հայաստանի կարիքները բավարարելու համար: Սրան ի պատասխան Գագիկ Վարդանյանը ասաց, որ գազատարը մինչեւ Վրաստանի սահման հասցնելու պահանջարկը չկա, եւ եթե դա լինի, ապա կկառուցվի ավելի մեծ տրամաչափով գազատար եւս: Այդուհանդերձ, բանավիճողներն այս հարցում նույնպես մնացին իրենց համոզմունքներին:

Ինչ մնում է մեր այն հարցին, թե ինչի հիման վրա էր ստեղծվել Էդուարդ Աղաջանովի այն հատաս համոզմունքը, որ Հայաստանին Ռուսաստանից մատակարարվող գազի սակագինը դառնալու է 110 դոլար, նա պատասխանեց, որ այդ մասին ասել է «Գազպրոմի» նախագահի տեղակալ Ոյազանովը, եւ դա տեղադրված է այդ ընկերության վեբկայքում: Սակայն երբ նրան հիշեցրեցինք, որ դրան հաջորդել են այս հարցի շուրջը երկու երկրների բանակցությունները, եւ անգամ Ռուսաստանի վարչապետ Միխայիլ Քրադկովը Հայաստանում գտնվելու ժամանակ որեւէ կոնկրետ սակագնի մասին չհայտնեց, Էդուարդ Աղաջանովից ստացանք «Քրադկովն ո՞վ ա, «Գազպրոմն» ամեն ինչ որոշել է» պատասխանը: Սա թերեւս որոշակի եզրակացությունների հնարավորություն է տալիս բանավեճի վերոնշյալ մասնակցի մասին:

ԱԲԵԼ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության ԺԳ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 375010 Հանրապետության 47
ֆաքս 374 1 562863
e-mail: azg2@arminco.com
www.azg.am
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՐԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Լրագրողների սենյակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայություն / հեռ 582483
Շուրջօրյա լրահավաք ծառայություն / հեռ 529353
Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով կամ ռադիոհեռուստատեսութեամբ առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

Հայաստանն անցնում է նախադեպի իրավունքի կիրառմանը

Առայժմ սկսելով աշխարհում դրա փորձի ուսումնասիրությունից

Հայաստանը շնորհիվ եւ ի հետեւանք սահմանադրական փոփոխությունների, կամաց-կամաց դասական համակարգում կանցնի նախադեպի իրավունքին: Երեկ մեկնարկեց նախադեպի իրավունքի գիտաժողովը, որ կազմակերպվել է Լոնդոնի «Բրիտանական արեւելք-արեւմուտք կենտրոն» կազմակերպության եւ ՀՀ վճռաբեկ դատարանի նախաձեռնությամբ, Հայաստանում ԱՄՆ իրավաբանների ընկերակցության եւ Հայաստանի վճռաբեկ դատարանի աշխատակազմի աջակցությամբ: Ծրագրի ֆինանսավորումն ապահովում է բրիտանական դեսպանատունը:

Որպես գիտաժողովի հիմնական նպատակ հայտարարվեց նախադեպի իրավունքի տեսության կիրառման ուսումնասիրությունն անգլո-ամերիկյան եւ մայրցամաքային իրավական համակարգերում, նաեւ միջազգային իրավունքում: Նախադեպի իրավունքի ուսումնասիրությունը զուտ անհրաժեշտություն է, որ բխում է ՀՀ նոր սահմանադրության 92-րդ հոդվածից, ըստ որի Հայաստանի վճռաբեկ դատարանը կոչված է ապահովելու օրենքի միատեսակ կիրառությունը, ինչը մեկնաբանվում է որպես նախադեպի սկզբունքի կիրառման հնարավորություն:

Գիտաժողովին ներկա էին դատավորներ, փաստաբաններ եւ իրավագետներ Հայաստանից, Անգլիայից, Մ. Նահանգներից եւ Վրաստանից: Ինչպես նշեց Հայաստանի վճռաբեկ դատարանի նախագահ Հովհաննես Մանուկյանը, համաձայն սահմանադրության նոր խմբագրության, վճռաբեկ դատարանի դերի ամրագրումը որպես օրենքի միատեսակ կիրառությունն ապահովող մարմին, իրավական հիմք է Հայաստանում ունենալու նախադեպի ինստիտուտը: Ըստ որմ Մանուկյանի, նախադեպի ինստիտուտի լիարժեք կիրառումը հնարավոր է այն դեպքում, երբ օրենսդրական մակարդակով կամրագրվեն ինստիտուտի բոլոր դեպալները: Վճռաբեկ դատարանի նախագահը գտնում է, որ եկող տարվա սկզբում հնարավոր է ունենալ օրենսդրական կարգավորումներ:

Արդարադատության նախարար Դավիթ Հարությունյանի համոզմամբ, նախադեպի ինստիտուտի օգտագործումը հնարավորություն կընձեռի օգտագործելու մի կարեւոր սկզբունք, այն է՝ բոլորը հավասար են օրենքի առջեւ: Ասվածի մեկնաբանությունը հետեւյալն է. հիշատակված սկզբունքի իրական նշանակությամբ դատարանները նմանատիպ գործերով պետք է ունենան նմանատիպ վճիռներ: «Դա հնարավորություն է ընձեռում ավելի կանխատեսելի դարձնելու դատական համակարգը, դարձնելու ավելի թափանցիկ»:

Այդ կերպ կկրճատվի նաեւ գործերի թիվը դատարաններում, քանի որ, ըստ արդարադատության նախարարի, ծանոթանալով նախադեպերին, կարելի կլինի ենթադրել որեւէ գործով դատարանի վճիռը: Դավիթ Հարությունյանը կարեւորեց նաեւ նախադեպի կիրառման դեպքում հասարակության իրավագիտակցության վրա ունենալիք ազդեցությունը եւ ավելացրեց, որ ըստ էության նախադեպն արդեն կիրառվում է: Մասնավորապես որպես նախադեպ են օգտագործվում մարդու իրավունքների եվրոպական դատարանի գործերը:

Գիտաժողովի ընթացքում ծրագրված ելույթները վերաբերում էին նախադեպի կիրառման անգլիական փորձին, մայրցամաքային իրավունքի երկրներում դրա օրենսդրական հիմքերին եւ դատական պրակտիկային, նախադեպի իրավունքին Մ. Նահանգներում, եվրոպական դատարանում, ընդհանուր առմամբ միջազգային իրավունքում եւ միջազգային այլաններում:

Ավելացնենք, որ նախադեպի իրավունքը Հայաստանի իրավական համակարգում արդյունավետ կիրառելու համար գիտաժողովը կոչոնանատիրի եղած փորձն ուսումնասիրի եղած փորձն ուսումնասիրի մակարդակով, որպեսզի հաշվի առնվեն Հայաստանի իրավական համակարգի առանձնահատկությունները: Ընդհանուր առմամբ նախադեպի կիրառումը միշտ չէ, որ պարտադիր է: Պարտադիր են վերադաս դատարանի ստեղծած նախադեպերը ստորադաս դատարանի համար, նույն մակարդակի դատարանների համար նախադեպը պարտադիր չէ, սակայն ունի կողմնորոշիչ նշանակություն:

Ինչպես, հաշվի առնելով Հայաստանի դատական համակարգի՝ տարբեր հետազոտություններով, ամենակոռումպացվածը լինելու հանգամանքը, հայաստանյան դատավորների ընդհանուր կերպարի ոչ դրական լինելը, ինչպես նաեւ դատական համակարգում վերահսկողության եւ պատասխանատվության հարցի անորոշ վիճակը, թերեւս հարկ է ի սկզբանե մեծապես կարեւորել դատավորների վերապատրաստման հարցը: Պակաս ուշադրության արժանի չէ նաեւ ստեղծվելիք օրենսդրության հակակոռուպցիոն բնույթի կարեւորումը: Թերեւս այս դեպքում, երբ, ըստ դատական համակարգի ներկայացուցիչների, պիտի ստեղծվի նոր օրենսդրություն նախադեպի իրավունքի ամրագրման համար, հնարավոր է եւ անհրաժեշտ նոր օրենսդրությունը մշակել հնարավորինս լավ եւ առանց թերությունների:

ԱՂԱՎՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հայ լրագրողները ծանոթացել են լեհական մամուլի փորձին

Տիշյալ փորձի կիրառումը գոնե առաջիկայում մեզ մոտ հնարավոր չէ

Ինչ ճանապարհ է անցել լեհական մամուլը, ինչպե՞ս է ֆինանսավորվում, ինչպիսի՞ն է Լեհաստանում վերաբերմունքը մամուլի հանդեպ, նրա տարրերից ո՞րն է կիրառելի Հայաստանի համար: Այս հարցերի պատասխաններն էին երեկ փորձում տալ Լեհաստանից վերջերս վերադարձած հայ լրագրողները Լրատվամիջոցների կովկասյան ինստիտուտում (ԼԿԻ) կայացած հանդիպման ժամանակ:

Այս տարվա հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին Լեհ-չեխ-սլովակյան համերաշխության հիմնադրամի «Անկախ լրատվամիջոցներ-6» ծրագրի շրջանակներում հայկական տարբեր լրատվամիջոցների 12 լրագրողներ 2 խմբերով եղել են Լեհաստանում: Հայաստանի եւ եւս 6 երկրների տպագիր եւ էլեկտրոնային լրատվամիջոցների մոտ 40 խմբագիրներ եւ թղթակիցներ երկշաբաթյա ճանաչողական հանդիպումներ են ունեցել Լեհաստանի իրենց գործընկերների հետ: Լրագրողական խումբն այցելել է լեհական թերթեր, հեռուստառադիոկայաններ, ինտերնետային պորտալներ եւ լրատվական գործակալություններ՝ ծանոթանալով լրագրողների աշխատանքին հենց տեղում: Ծրագրի շրջանակներում մասնակիցների համար կազմակերպվել են նաեւ սեմինարներ:

«Արմինֆո» լրատվական գործակալության տնօրեն Էմանուիլ Մկրտչյանը «Լրատվամիջոցներն իբրեւ բիզնես. Լեհաստանի փորձը» թեմայի շուրջը խոսելիս նախ ընդգծեց, որ ի տարբերություն գերմանական, անգլիական մամուլի, Լեհաստանի մամուլի փորձը մեզ ավելի մոտ է կանխատեսումներ անելու իմաստով: Հետո էլ նա նշեց, որ Լեհաստանում ԶԼՄ-ներին մոտենում են իբրեւ բիզնեսի, որը խիստ կարեւոր է: Պրն Մկրտչյանի խոսքերով, Լեհաստանում, բացառությամբ Tok Fm ռադիոկայանի, բոլոր լրատվամիջոցները զբաղվում են բիզնեսով: Պակաս կարեւոր չէ նաեւ այն, որ լեհական լրատվամիջոցներն ինչ-որ միջոցներով այսօր հասել են ինքնաֆինանսավորման: Իսկ պրն Մկրտչյանը կարծում է, որ մեզ մոտ ինքնաֆինանսավորման հասնելը հնարավոր է միայն տնտեսական վերափոխումների միջոցով, երբ չի լինի քաղաքական տանիք ասվածը, երբ թերթերը կդառնան բիզնես, մամուլի շուկայում ներդրումներ կանեն օտարերկրյա ներդնողները՝ իրենց տեխնոլոգիաներով: Բանախոսն ընդգծեց, որ մեզ մոտ էլ ժամանակն է ստեղծելու անվճար թերթեր:

Վանաձորի մամուլի ակումբից Նաիրա Բուլղադարյանը լեհական մամուլի օրենսդրական դաշտի մասին ասաց, որ ի տարբերություն Հայաստանի, Լեհաստանում մամուլի, ԶԼՄ-ների մասին հստակեցված օրենսդրություն չկա: Լրագրողը կարծում է, որ Հայաստանում էլ օրենքը կիրառելու խնդիր կա: Հետաքրքրական էր, որ լեհական մամուլը, ներկաների խոսքերով, անընդհատ ջանում է ընթերցողներին գրավել ներդիրներ, հատուկ ուղղվածությամբ (տնտեսություն, առողջապահություն) հավելվածներ, թերթերին եւ ամսագրերին կից սկավառակներ եւ այլն: ԼԿԻ տնօրեն Ալեքսանդր Իսկանդարյանն էլ կարծիք հայտնեց, որ թեեւ լեհական մամուլի փորձից մենք սովորելու բաներ ունենք, սակայն պետք է ընտրել մի մոդել, որը կաշխատի Հայաստանում՝ հաշվի առնելով մեր երկրի բնակչության քանակը, կենսամակարդակը, տնտեսական իրավիճակը եւ այլ գործոններ:

Վերադարձից հետո ծրագրին անդրադարձած «Առավոտ» օրաթերթի եւ Վանաձորի «Քաղաքացիական նախաձեռնություն» թերթի լրագրողներին հանձնվեցին մրցանակներ:

ԳՈՀԱՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԴԵԴՈՒՄՈՒԹՅՈՒՆ

«17 + 1-ը» դատի է տալիս հանրաքվեի կենտրոնական հանձնաժողովի 7 անդամներին

«Կատարվել է հանցագործություն, որի պատճառով հարցականի տակ է դրվում սահմանադրության օրինականության հարցը»

«17 + 1» միավորման՝ Հանրաքվեի օրինականությունը վերահսկող-հասարակական հանձնաժողովը հանրաքվեի կենտրոնական հանձնաժողովի (ԿԸՀ) 7 անդամներին քրեական պատասխանատվության ենթարկելու եւ այդ առթիվ իր անելիքը պարզաբանելու համար երեկ լրագրողներին ասուլիսի էր հրավիրել:

ԱԺ ՕԵԿ, ՀՀԿ, ՀՅԴ, ՄԱԿ պատգամավորական խմբակցություններին, ԺՊ պատգամավորական խմբին, ՀՀ վճռաբեկ դատարանին հղած նամակում հանձնաժողովը տեղեկացնում է «հանրաքվեի կենտրոնական հանձնաժողովի 7 անդամների պաշտոնական լիազորությունների անցման եւ «Հանրաքվեի մասին» ՀՀ օրենքի պահանջների կոպիտ խախտման մասին»:

Հանրաքվեի նախապատրաստման եւ քվեարկության ընթացքում կատարված իրավախախտումների կապակցությամբ հանրաքվեի օրինականության հանձնաժողովը դատարաններ է ներկայացրել 100-ից ավելի դիմում-բողոքներ, որոնք, ըստ իրենց, էական ազդեցություն են ունեցել քվեարկության վերջնական արդյունքների վրա: Այդ դիմումներից 25-ը նոյեմբերի 28-ին ներկայացրել են Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարան: Դիմումներից մեկն, ի դեպ, վերաբերել է ՀՀ նախագահի կողմից քվեարկության գաղտնիության խախտմանը:

Առաջին ատյան հղված բողոքների մասին նոյեմբերի 30-ին համապատասխան գրությամբ տեղեկացվել է հանրաքվեի կենտրոնական հանձնաժողովը (ԿԸՀ):

Ըստ հանրաքվեի օրինականության հանձնաժողովի համակարգող Ռուբեն Թորոսյանի, հանրաքվեի կենտրոնական հանձնաժողովն առանց մաքսիմալ ուշադրության առնելու առաջին ատյանին հղված բողոքների առկայությունը, ամփոփել է հանրաքվեի արդյունքները եւ համապատասխան արձանագրությամբ վավերացրել: Ավելին՝ «Հանձնաժողովի քարտուղար Համլետ Աբրահամյանը կեղծ տեղեկատվություն է ներկայացրել, թե՝ «...առաջին ատյանի համապատասխան դատարաններում՝ օրենքով սահմանված ժամկետում, տեղամասերում քվեարկության արդյունքների հետ կապված բողոքներ չեն ներկայացվել...»:

Հանրաքվեի օրինականությունը վերահսկող հասարակական հանձնաժողովի համակարգողը մեկ առ մեկ թվարկեց օրինախախտների անունները՝ Գ. Ազարյան, Ա. Բախչագուլյան, Հ. Աբրահամյան, Ա. Ավոյան, Ա. Խառատյան, Ս. Առաքելյան, Է. Հայրիյան: Համապատասխան հաղորդագրություն է հղվել ՀՀ գլխավոր դատախազությանը:

Հանձնաժողովի համակարգողը կատարված օրինախախտումների վերացման համար համագործակցելու առաջարկ է անում նաեւ կոալիցիային:

Ռուբեն Թորոսյանն ասում է, որ հաջողության չհասնելու դեպքում հանձնաժողովը որոշել է դիմել Մարդու իրավունքների եվրոպական դատարան: Միջազգային այլաններին դիմելը չի նշանակում, որ հիացած են նրանցով: Ավելին, համակարգողը քննադատության սուր սլաքներ ուղղեց եվրոպական դիտորդներին, որոնք, ըստ իրենց գնահատականի, նույնպես օրինախախտումներ են թույլ տվել: Սակայն այդ իրողությունը նրան չի անհանգստացնում, ինչպես եւ այն, որ 2003-ին նույնպես օրինախախտումներով ընտրություններ եղան եւ դատական այլանները որեւէ կերպ չարձագանքեցին դրանց:

Ի վերջո, իրենց նպատակը ոչ թե հանրաքվեն չեղյալ հայտարարելն է, այլ մեկ անգամ եւս ապացուցելը, որ Հայաստանում իշխանությունը յուրացրել են մի խումբ մարդիկ, եւ ժողովուրդն իր իրավունքները իրացնելու ոչ մի հնարավորություն չունի. «Կատարվել է հանցագործություն, որի պատճառով հարցականի տակ են դրվել երկրի սահմանադրության օրինականությունը»:

Իրենց ձեռնարկի հետագա ճակատագրի մասին «17 + 1» միավորման Հանրաքվեի օրինականությունը վերահսկող հասարակական հանձնաժողովը կտեղեկացնի ընդդիմության հերթական՝ դեկտեմբերի 16-ի հանրահավաքում, որի թույլտվության վերաբերյալ դիմումը քաղաքապետարանը չի մերժել:

ԿԱՐԻՆԵ ԴԱՆԻԵԼՅԱՆ

Կես կիլոգրամ բողոք ԱՄՆ դեսպան Ջոն Էվանսին

Ռուբեն Թորոսյանը դատարանների 93 որոշումների պատճեններից բաղկացած 0,5 կգ-անոց քաշի թղթերի կապոց է ուղարկել Հայաստանում ԱՄՆ դեսպան Ջոն Էվանսին: «Դատական համակարգը քննարկման չընդունեց օրենքով նախատեսված ոչ մի նման դիմում-բողոք՝ ի սկզբանե հարցականի տակ դնելով հանրաքվեի արդյունքները», գրված է կից նամակում: «Հանրաքվեի արդյունքների աղավաղման անուղղակի մասնակից» անվանելով դեսպանին, Ռուբեն Թորոսյանը մտադիր է պատասխանի չարժանանալու դեպքում դիմել նաեւ ԱՄՆ պետդեպարտամենտին՝ ամերիկյան իշխանություններին բողոքելու իրենց «օրինախախտ չինովնիկից»:

Կ. Դ.

«Մերսոյան ուղղագրությունը վերականգնողների» միավորումն ընտրել է պատվավոր նախագահներ եւ խորհուրդ

Օրերս կայացել է «Մերսոյան ուղղագրությունը վերականգնողների» միավորման նիստը, որի ժամանակ միավորման պատվավոր նախագահներ են ընտրվել Ներսես արք. Պողարյանն ու քանդակագործ Ղուկաս Չուբարյանը: Միավորման սփյուռքի ներկայացուցիչներն են բանաստեղծ Զահրաթը, Զարեհ Խրախունին, Սարասլանը եւ այլք՝ Կ. Պոլսից, Պերճ եւ Սեդա Թերզյանները՝ Եգիպտոսից, Վահան Վահանյանը՝ Մ. Նահանգներից, Վիեննայի Մխիթարյանների աբբահայր հայր Պողոսը, Անջեյ Պիսովիչը՝ Լեհաստանից:

Գործադիր խորհրդի անդամ է ընտրվել Պարգեւ Շահբազյանը, խորհրդի կազմում ընդգրկվել են ակադեմիկոսներ Գրիգոր Գուրզադյանը, Պարիս Հերունին, Լեւոն Զեքիյանը, Հենրիկ Բախչինյանը, Հիլտա Գալֆայանը, Սուրեն Դանիելյանը, Ռուբեն Ղազարյանը, Արշակ Մադոյանը եւ ուրիշներ: Միավորման գործադիր մարմնի կազմում են համակարգչի մասնագետ Արամ Գորոյանը, Գրիգոր Գոկումջյանը, Գետրգ Յազըճյանը եւ ուրիշներ, իսկ սփյուռքից՝ Վաչե Գալստյանը, Արտավազդ Ավագյանը, Սալբի Գասպարյանը, Ռոբեր Հաստեճյանը, Հակոբ Պալյանը, Թորոս Թորանյանը եւ այլք:

Մասնագիտական հանձնախմբում ընդգրկված են Հիլտա Գալֆայանը, Լեւոն Զեքիյանը, Ռուբեն Ղազարյանը, Արշակ Մադոյանը, Հայկանուշ Մերսոյանը, Խորեն Պալյանը եւ հայր Պողոսը:

Ռ. Պ.

Ներգաղթյալներն ամեն մի հասարակության շարժիչ ուժն են

1-ին էջից

Հաճախ է պատահում, որ Արեւմուտքում եւս այդ հարցերով զբաղվում են ոչ թե պետկառույցների պաշտոնական անձինք, այլ երկրի ղեկավարության կամ նույն արտգործնախարարության խնդրանքով հատկապես նշանակված մարդիկ, որոնք վստահելի են, հարգված, կարող են իրենց թույլ տալ բանակցել ավելի լայն ձեւաչափով, քան դիվանագետները: Ահա թե ինչու ես այդ գործերում ներգրավվեցի հայ օդաչուների դեպքում Հայաստանի իշխանությունների եւ ռուս նավաստիների դեպքում՝ Ռուսաստանի իշխանությունների համաձայնությամբ: Կարծում եմ, Ռուսաստանն այստեղ էլ մեծ հոգածություն եւ ուշադրություն կդրսեւորի փորձանքի մեջ ընկած իր քաղաքացիների հանդեպ:

- Ձեր կարծիքով, ինչ է հարկավոր անել, որպեսզի Ռուսաստանի քաղաքացիներն ապագայում չհայտնվեն նման իրավիճակներում եւ զգան իրենց պետության պաշտպանությունը:

- Ցի կարելի բացառել մեր նավաստիների հայտնվելն այնպիսի իրավիճակում, երբ նրանց կմեղադրեն ձկնագողության մեջ: Մենք մշտապես ականատես ենք լինում նման դեպքերի, օրինակ՝ ճապոնացիների հետ, որոնք հայտնվում են Ռուսաստանի տարածքային ջրերում: Վերջերս նման իրավիճակում հայտնվեցին մեր ձկնորսները նորվեգացիների հետ վիճելի գոտում: Այդ իրավիճակները միշտ կլինեն, եւ հարցը դրանց կանխումը չէ: Հարցն այն է, որ քաղաքացիներն ինչպիսի վիճակում էլ հայտնվեն, նույնիսկ այս կամ այն պետության օրենքները ծովում, ցամաքում կամ օդում խախտելու դեպքում վստահ լինեն, որ իրենց պետությունը մշտապես կպաշտպանի իրենց շահերը: Սա բնավ չի նշանակում, թե այդ մարդիկ չեն պատժվի կատարած հանցագործությունների կամ զանցանքների համար: Բայց նրանք չպետք է թողնվեն բախտի քմահաճույքին, եւ նրանց կրելիք պատասխանատվությունը պետք է համապատասխանի իրենց կատարածին: Ահա թե ինչու շատ պետություններ սովորաբար ձգտում են, որպեսզի ուրիշ երկրում օրենքը խախտած իրենց քաղաքացիները պատիժ կրեն հայրենիքում, ինչն, իհարկե, պատիժ է, բայց կրկնակի չի խորանում օտար լեզվամշակութային միջավայրում գտնվելու հետեւանքով:

- Ֆրանսիայի դրամատիկ իրադարձությունների լույսով ներգաղթյալների ինտեգրման հարցերն առանձնահատուկ կարեւորություն են ստանում նաեւ Ռուսաստանում: ՌԴ-ում ապրող հայերի մեջ քիչ չեն այնպիսիք, որոնք այստեղ հայտնվել են վերջին տարիներին՝ փնտրելով աշխատանք եւ կայունություն: Ձեր կարծիքով, այդ մարդիկ ինչպե՞ս են ինտեգրվում ռուսաստանյան կյանքին:

- Իրք, խորհրդային Միության փլուզումից հետո Հայաստանի տնտեսական ոլորտում իրավիճակի վատթարացման, բազմաթիվ ձեռնարկությունների փակման պատճառով հարյուր հազարավոր հայեր հեռացան հանրապետությունից: Նրանցից շատերը հաստատվեցին Ռուսաստանում՝ Պետերբուրգից մինչեւ Վլադիվոստոկ, Արխանգելսկից եւ Մուրմանսկից մինչեւ Սոչի. ամենուրեք հայտնվեցին հայերի նոր խմբեր: Այդ վայրերում գտնվող հայկական հին համայնքները նրանց օգնում են հարմարվելու լեզվական եւ մշակութային նոր միջավայրին՝ հաճախ ստեղծելով միանգամայն նոր համայնքներ: Նրանք զբաղվում են մանր ու միջակ գործարարությամբ, փորձում ստեղծել նոր աշխատատեղեր, որպեսզի իրենք աշխատեն եւ ապա սեփական գործն ընդլայնելով՝ ներգրավեն ուրիշներին: Պետք է ասել, որ գործընթացը բավական հիվանդագին է: Բայց հայկական համայնքն ունի Ռուսաստանի մշակութային, լեզվական եւ տնտեսական միջավայրին ինտեգրվելու բազմադարյա փորձ, ուստի այստեղ մենք չենք տեսնում շատ լուրջ խնդիրներ:

- Ներկայումս ովքե՞ր են կազմում Ռուսաստանի հայերի միության ակտիվը եւ կոնկրետ ո՞րն է Ձեր կազմակերպության հիմնական գործունեությունը:

- Հայերի միության ակտիվը կազմում են 240 քաղաքներում Ռուսաստանի Դաշնության 70-ից ավելի սուբյեկտների հայկական համայնքները: Այդ բոլոր համայնքներում այսօր գլխավոր ուժը Հայաստանից նոր եկած մարդիկ են, որոնք լի են վճռականությամբ տնտեսական ու սոցիալական հաջողության հասնելու նոր բնակավայրում, նոր միջավայրում: Նրանք շատ են աշխատում, թե սեփական էթնոսի, այլ պետության հանդեպ վերաբերմունքով:

- Հայերը համահավաք բնակվում են Ռուսաստանի հարավի բազմաթիվ քաղաքներում: Բայց հաճախ խոսվում է տեղական ռուս բնակչության, կազակների հետ հայերի խնդիրների եւ հակամարտությունների մասին: Ռուսաստանի հայերի միությունն ինչ ձեւով է մասնակցում այդ հակամարտությունների լուծմանը: Ինչպե՞ս եք գնահատում իշխանությունների դիրքորոշումն այդ իրավիճակներում:

- Այո, հայերն ապրում են Ռուսաստանի հարավի բազմաթիվ քաղաքներում՝ Կրասնոդարի, Ստավրոպոլի երկրամասերում, Ռոստովի մարզում: Բայց այդ վայրերում եղել են նաեւ հայկական հին համայնքներ, որոնք մի քանի փուլերով ձեւավորվել էին 19-րդ դարում, Առաջին աշխարհամարտից եւ ցեղասպանությունից հետո: Այն ժամանակ հայ գաղթականները բնակություն հաստատեցին Ռուսաստանի հարավում եւ դարձան բնակչության օրգանական մասը: Դրանք նաեւ դրիմահայերն են, որոնք հիմնեցին այսօր Ռոստովի մասը կազմող Նախիջեւան քաղաքը: Խորհրդային Միության փլուզումից հետո բազմաթիվ հայեր եկան այդ քաղաքներ եւ համայնքներ, քանի որ այնտեղ ունեին ազգականներ եւ միջավայրն էլ ծանոթ էր: Իրք, հատկապես 90-ական թթ. այստեղ ծագեցին միասնական երկրի տրոհման հետ կապված խնդիրներ, չկային տարբեր էթնիկական խմբերի փոխգործողության արդյունավետ մեխանիզմներ, սկսվեց «վայրի» կապիտալիզմի գործընթաց. ոմանք հարստանում էին, մյուսներն՝ աղքատանում: Եվ շատերի համար ձեռնտու էր իրենց քաղաքական նպատակներով օգտագործել ունեցվածքային շերտավորումը՝ դրան տալով էթնիկական երանգավորում. իբր ոմանք հարստացել են մյուսների հաշվին: Բախումներ էին լինում նաեւ կենցաղային հողի վրա: Պետք է ասել, որ իշխանական կառույցների ներկայացուցիչները եւս մասամբ նպաստում էին այդ երեւույթներին: Դա հատկապես ցայտուն արտահայտվեց Կրասնոդարի երկրամասում Կոնդրատենկոյի կառավարման ժամանակամիջոցում:

Վերջին տարիներին Ռուսաստանի հայերի միությունը հսկայական աշխատանք է կատարել: Մենք կանոնավորապես լինում ենք Ռուսաստանի հարավում, այցելում Կրասնոդարի, Սոչիի, Ստավրոպոլի եւ այլ քաղաքների հայ համայնքներ: Հանդիպումներ ենք ունենում Ռուսաստանի ուղղափառ եկեղեցու ներկայացուցիչների, նահանգապետների, իրավապահ մարմինների ներկայացուցիչների, պաշտոնատար անձանց հետ, տեղերում կապեր հաստատում կազակների եւ հայկական համայնքների միջեւ: Այնպես որ, այսօր տեղական իշխանությունները չունեն էթնիկական խմբերի տարանջատման քաղաքական գիծ: Նրանք հասկանում են, որ Ռուսաստանի հարավում անհրաժեշտ է կայունություն. չէ՞ որ մոտերում Չեչնիան է: Այս կողմից, ուժեղացել է բուն պետությունը, եւ նախագահական իշխանության ուղղահայացն այսօր շրջանային պետերի վրա ներգործելու անհամեմատ ավելի լուրջ հնարավորություններ ու լծակներ ունի, որպեսզի նրանք պահպանեն ազգամիջյան հաշտությունն ու համաձայնությունը եւ ոչ թե լուրջ բարդություններ ստեղծեն հենց պետության ու նրա ապագայի համար: Ազգամիջյան հարաբերությունների խնդիրն այսօր դառնում է պետական քաղաքականության գլխավոր գերակայություններից մեկը: Ահա թե ինչու ինձ թվում է, որ ապագայում այդ ոլորտին կուղղվեն ֆինանսական եւ մասավոր խոշոր ներդրումներ, որպեսզի կանխվի բացասական գործընթացների զարգացումը:

- Հայաստանը, նրա քաղաքականությունը եւ ղեկավարությունն ինչպիսի՞ ազդեցություն են գործում Ռուսաստանում ապրող հայերի վրա: Եվ կա՞ արդյոք ռուսաստանցի հայերի հակադարձ ազդեցություն Հայաստանի իշխանությունների որոշումների վրա:

- Ռուսաստանում ապրող հայերի վրա Հայաստանի եւ նրա իշխանությունների անմիջական ազդեցությունն աննշան է, թեպետեւ պետք է ասել, որ Ռուսաստանի հետ Հայաստանի բարիդրացիական, դաշնակցային հարաբերությունները եւ գործընկերությունը, արտաքին քաղաքական եւ ռազմական ջանքերի համակարգումը Ռուսաստանի հստակայնության մեջ եւ իշխանական կառույցներում բարենպաստ մթնոլորտ ու ֆոն են ստեղծում հայերի համար: Դա իրք կարեւոր նշանակություն ունի: Բայց Հայաստանը, իմ կարծիքով, առայժմ բավարար առաջընթացի չի հասել Ռուսաստանի հայկական կապիտալի ներգրավման մեխանիզմների ստեղծման գործում: Չկա Հայաստանի իշխանական կառույցների փոխգործողության ինստիտուցիոնալ մեխանիզմ նույնիսկ այնպիսի կազմակերպության հետ, ինչպիսին է Ռուսաստանի հայերի միությունը, որի շրջանակներում միավորված են Ռուսաստանի գրեթե բոլոր հայկական համայնքները: Սրանում կան որոշակի խնդիրներ եւ բացթողումներ, որոնք Հայաստանի ղեկավարությունը փորձում է լուծել, ինչպես ինքն է հայտարարել, առավել արդյունավետ մեխանիզմի ստեղծմամբ, որը թերեւ կձեւավորվի 3-րդ Համահայկական ֆորումի ժամանակ: Հայաստանի իշխանությունները մտադիր են այդ համաժողովը հրավիրել եկող տարի Երեւանում:

Ինչ վերաբերում է Հայաստանի իշխանությունների որոշումների վրա հայ համայնքի ազդեցությանը, այստեղ եւս կան ինչպես որոշակի ձեռքբերումներ, այնպես էլ խնդիրներ: Նախ եւ առաջ հայկական սփյուռքից, ոմանց կարծիքով, հանրաքվեություն մուտք գործող 1 կամ 1,5 մլրդ դոլարի կեսը, եթե ոչ ավելին, ընկնում է ռուսաստանցի հայերին: Նրանք իրենց փողերով անմիջականորեն պահպանում են Հայաստանի Հանրապետության կայունությունը: Եվ եթե Հայաստանում չկան սոցիալական եւ «սովյալ» խռովություններ, ապա դա զգալի չափով պայմանավորված է ոչ թե իշխանությունների գործունեությամբ, որոնք պարտավոր են տեղական բնակչությանն ապահովել աշխատատեղերով, վճարել պատշաճ աշխատավարձ եւ թոշակ, այլ արտաքին ֆինանսական օժանդակությամբ: Եվ դա վերացնում է սոցիալական լարվածությունը: Ռուսաստանցի հայերը եւ Ռուսաստանի հայերի միությունն իրենց գործունեության մեջ ղեկավարվում են նրանով, որ ռուսաստանյան կապիտալն ավելի լավ ներկայացված լինի Հայաստանում: Պատահական չէ, որ մենք շատ ակտիվ էինք «Գույք պարտի դիմաց» գործարքին ուղղված ջանքերում, որպեսզի Ռուսաստանն արդիականացնի Հայաստանի ձեռնարկությունները եւ հազարավոր մարդկանց ապահովի աշխատատեղերով, պատշաճ վարձատրությամբ, ինչը կլիներ Հայաստանի եւ Ռուսաստանի տնտեսական հարաբերությունների ամրապնդման շատ լուրջ գործոն: Մենք նաեւ ջանում ենք մեր նպատակային ծրագրերը կազմել փոքր եւ միջակ բիզնեսի ոլորտում, որպեսզի դրանք իրագործենք հենց Հայաստանում՝ հավելյալ աշխատատեղեր ստեղծելու համար: Ռուսաստանցի հայերը, այդ թվում նաեւ մեր կազմակերպությունը, ջանում են իրենց մասավոր եւ քաղաքական հնարավորությունների սահմաններում մասնակցել հայ ժողովրդի համար լուրջ այնպիսի հարցերի լուծմանը, ինչպիսիք են Ղարաբաղի խնդրի կարգավորումը եւ Հայաստանի ու Թուրքիայի հարաբերությունների կանոնավորումը:

- Վրաստանի նախագահը վերջերս հայտարարեց, որ հետխորհրդային տարածքի, այդ թվում Հարավային Կովկասի արմատական ժողովրդավարացումը շարունակվելու է: Նկատի ունենալով, որ Ադրբեջանի իշխանություններին ըստ երեւույթին հաջողվել է խուսափել «նարնջագույն» սցենարից, ստացվում է, որ հերթը Հայաստանինն է: Ինչպիսին է Ռուսաստանի հայերի միության դիրքորոշումն իրենց պատմական հայրենիքում «հեղափոխության» հնարավորության կապակցությամբ:

- Կարծում եմ, Վրաստանի նախագահն ասում է այն, ինչ դեռ վերջերս ասում էին նրա «ավագ ընկերները». ես նկատի ունեմ նախագահ Բուշին, ըստ որի վարչակարգերը փոխելու ամերիկյան ռազմավարությունը շարունակվելու է: Այդ քաղաքականությունը կարող է շարունակվել թե՛ Հարավային Կովկասում, թե՛ Կենտրոնական Ասիայում: Իրք, Բաքվում վերջերս տեղի ունեցած իրադարձությունները ցույց տվեցին, որ ո՛չ ԱՄՆ-ը, ո՛չ էլ Ռուսաստանը շահագրգռված չեն եղել Ադրբեջանում «նարնջագույն հեղափոխության» հաղթանակով, իսկ ընդդիմությունը դրա հնարավորությունը չի ունեցել: Ամերիկացիները շահագրգռված են այդ շրջանի կայունության պահպանմամբ, նկատի ունենալով, որ իրենց ընկերությունները միլիարդներ են ներդրել Կասպից ծովի նավթի ու գազի պաշարների յուրացման մեջ: Ահա թե ինչու ամերիկացիների առանձնակի հետաքրքրությունն եմ տեսնում այդ տարածաշրջանի նկատմամբ: Իսկ ինչ վերաբերում է Հայաստանին, չեմ կարծում, թե այնտեղ «նարնջագույն հեղափոխության» նշում լինի: Իշխանությունը բավականաչափ ամուր է, չկա լուրջ պառակտում ռուսամետ եւ արեւմտամետ ուժերի, որը կար Ուկրաինայում կամ Վրաստանում: Թեեւ Վրաստանում ըստ էության արեւմտամետ գործիչ Շեւարդնաձեին փոխարինեցին մեկ ուրիշ՝ էլ ավելի արեւմտամետ քաղաքական գործիչով: Հայաստանում չկան նման լիդերներ, համենայն դեպս, առայժմ չկան: Եվ ինձ թվում է, որ մոտ ապագայում հազիվ թե ստեղծվեն «նարնջագույն» սցենարի նախադրյալներ:

Որպես Ռուսաստանի հայերի միության ղեկավար, ես սկզբունքորեն ամեն մի հեղափոխության կտրական հակառակորդն եմ: Հեղափոխությունները հանգեցնում են աղակայունացման, կարող են հանգեցնել քաոսի եւ անկառավարելիության: Հայաստանում ներկա պայմաններում, հատկապես նկատի ունենալով դարաբաղյան պատերազմի կապակցությամբ Ադրբեջանի հետ, ինչպես նաեւ Թուրքիայի հետ չկարգավորված հարաբերությունները, նաեւ քաոս եւ անկայունություն ստեղծելը կլիներ չափազանց մեծ «շեղություն»:

Տարածաշրջանում ուրվագծվել է հոգեբանական պատերազմ

Դրա մեջ Իրանի նախաձեռնությամբ ներքաշվում է Իսրայելը

Հոկտեմբերի 26-ին Թեհրանում «Աշխարհն առանց սիոնիզմի» թեմայով համաժողովի ամբիոնից Իրանի Իսլամական Հանրապետության նախագահ Մահմուդ Ահմադինեժադը հայտարարել էր. «Իսրայելը պետք է ջնջվի քարտեզից»: Նրա հայտարարությունը բուռն հակազդեցություն է առաջ բերել միջազգային շրջանակներում: Սակայն դա չէր խանգարել նախագահ Ջորջ Բուշին, որ իրանական կողմի հետ բանակցություններ վարելու կարգադրություն անի Իրաքում ԱՄՆ-ի դեսպան Զալմայ Հալիլզադին:

Կարգադրության մասին «Նյուզուիքի» նախավերջին համարի տեղեկությունը պաշտոնապես հաստատել է պետքարտուղարությունը: Դրան հետևեց իսրայելական «Եդիոթ ահրոնոթ» թերթի դեկտեմբերի 1-ի հրապարակումը, որտեղ բացահայտվում էին ֆուդ փեշմերգաներին մարզող իսրայելցի հրահանգիչների ու Հյուսիսային Իրաքի Էրբիլ քաղաքի մոտակայքում տեղակայված «Մոսադի» բազայի գործունեությունը:

Այլ կերպ՝ եթե նախագահ Ահմադինեժադը վերոհիշյալ հայտարարությամբ մատնացույց էր անում, որ Իրանին ռազմական ներխուժման սպառնալիքի տակ պահելիս ԱՄՆ-ն առաջնորդվում է Իսրայելի շահերով, ապա «Եդիոթ ահրոնոթը» Հյուսիսային Իրաքում «Մոսադի» գործունեության մասին հրապարակումով փորձում էր մատնացույց անել Իրանին առանց ԱՄՆ-ի միջնորդությանն սպառնալու Իսրայելի կարողությունները:

Թերեւս այդ առումով պատահական չէր դեկտեմբերի 8-ին Մեքքայում «Իսլամական կոնֆերանս» կազմակերպության գագաթաժողովին Մահմուդ Ահմադինեժադի ելույթը, որտեղ նա, կասկածի տակ դնելով Հոլոքոստի փաստը, վերստին սպառնացել է Իսրայելին: Դրան զայրույթով արձագանքել է Մեծ Բրիտանիայի արտգործնախարար Ջեք Սթրոուն, իսկ Գերմանիայի կանցլեր Անգելա Մերկելը հայտարարել է. «Բեռլինը կանի անհրաժեշտ ամեն ինչ, որպեսզի ոչինչ չսպառնա Իսրայելի գոյության իրավունքին»:

Այդ ընթացքում «Սանդեյ թայմսը» դեկտեմբերի 11-ի համարում հետեւյալ չարաբաստիկ կանխագուշակումն է արել. «2006 թ. մարտին խորհրդարանական վաղաժամկետ ընտրություններից առաջ Իսրայելը մտադրվել է օդային հարված հասցնել Իրանի միջուկային օբյեկտներին»: Որպեսզի դա հիմք ունենա, անգլիական թերթը հիշեցրել է, որ 1981 թ. Իսրայելն Իրաքի միջուկային օբյեկտներին նույնպես հարվածել էր ընտրությունների նախօրյակին:

Հատկանշական է, որ նախագահ Ահմադինեժադի ինչպես Թեհրանում արած հայտարարությունը, այնպես էլ Մեքքայում գագաթաժողովի ելույթը համահունչ արտահայտություններով հաստատել է հեղափոխության առաջնորդ այաթոլլահ Ալի Խամենեին: Սա մեկ անգամ եւս հաստատում է, որ Մահմուդ Ահմադինեժադի հակաիսրայելական հայտարարությունն ու ելույթը նախապես ծրագրված են, փոխհամաձայնեցված եւ հաշվենկատ: **«Ազգը»** հայտարարությունը նոյեմբերի 4-ի համարում պայմանավորել էր պաշտոնական Թեհրանի քաղաքական հաշվարկներով: Նույնը ըստ երեւույթին պետք է ասել նաեւ վերջին ելույթի պարագայում:

Միաժամանակ կարելի է ոչ պակաս հաշվենկատ համարել իսրայելական «Եդիոթ ահրոնոթի» եւ անգլիական «Սանդեյ թայմսի» հրապարակումները: Ինչո՞վ բացատրել: Ամենայն հավանականությամբ՝ հանուն նախաձեռնության Իրանի եւ Իսրայելի անհաշտ պայքարով:

Որքան էլ Մահմուդ Ահմադինեժադի հակաիսրայելական արտահայտությունները բուռն հակազդեցություն առաջ բերեն միջազգային ասպարեզում, այնուամենայնիվ, շնորհիվ դրանց Իրանի Իսլամական Հանրապետությունը շարունակում է մնալ միջազգային հանրության օրակարգում: Դրանով զգալիորեն սահմանափակվում են Իրանին միջազգայնորեն մեկուսացնելու Վաշինգտոնի հնարավորությունները: Քանի որ Իրանն ամերիկյան սպառնալիքներին պատասխանում է այդ սպառնալիքի բուն աղբյուրը հանդիսացող Իսրայելին սպառնալով, ուստի նախաձեռնության տերն է դառնում տարածաշրջանում: Այսինքն՝ նախաձեռնությունը ԱՄՆ-ից եւ Իսրայելից անցնում է Իրանին:

Նախաձեռնությունը զիջելու, ինչպես նաեւ իրանական սպառնալիքի թիրախը դառնալու հանգամանքը հավասարակշռությունից հանում է Իսրայելին: Նա հայտնվում է Իրանի սպառնալիքներին ինքնուրույն հակադրվելու հրամայականի առջեւ:

Այսպիսով տարածաշրջանում սկզբնավորվում է հոգեբանական նոր պատերազմ, որի մեջ Իրանի նախաձեռնությամբ ակամա ներքաշվում է Իսրայելը: Դրա պարտադրված բնույթը թուլացնում է իրանական պետության նկատմամբ իսրայելական շահերով առաջնորդվող ԱՄՆ-ի դիրքերը: Այս պայմաններում կասկածի տակ են դրվում քաղաքական եւ դիվանագիտական միջոցներով առաջադրանքն առաջիկայում լուծելու, առավել եւս իր դաշնակիցներին, ի դեմս Իսրայելի, Իրանի հետ անմիջական առճակատումից զերծ պահելու Վաշինգտոնի կարողությունները:

ՀԱԿՈԲ ՉԱՔԱՐՅԱՆ

ՄԱԿ-ը չի շտապում պատժել Սիրիային

Թեեւ երկուշաբթի օրը ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդին հանձնվեց Լիբանանի նախկին վարչապետ Ռաֆիկ Հարիրիի սպանության գործը քննող միջազգային անկախ հանձնախմբի երկրորդ զեկուցագիրը, բայց ՄԱԿ-ն առայժմ մտադիր չէ պատժամիջոցներ կիրառել Սիրիայի նկատմամբ: Այդ մասին հայտնի է դարձել իսրայելական «Հաարեց» թերթի թղթակցին:

Անկախ հանձնախմբի ղեկավար, գերմանացի դատախազ Դեսլեֆ Մեհլիսն իր ներկայացրած երկրորդ զեկուցագրում նոր տվյալներ է բերում Հարիրիի սպանությանը Սիրիայի իշխանությունների մեղսակցության վերաբերյալ: Վկաներից մեկը քննիչներին պատմել է, որ Սիրիայի եւ Լիբանանի հատուկ իշխանությունները հատուկ գործակալներ էին հավաքել Հարիրիի դեմ մահափորձ նախապատրաստելու համար: Փաստաթղթում նշվում է, որ միջազգային քննությամբ բացահայտվել են 19 անձինք, որոնք կասկածվում են Հարիրիի սպանության կազմակերպմանը մեղսակից լինելու մեջ: Այդ անձանցից վեցը սիրիացի բարձրաստիճան պաշտոնական անձինք են, որոնց անուններն առայժմ չեն հրապարակվում: Մեհլիսը անկախ հանձնախմբի եզրակացությունները երեկ հրապարակել է ՄԱԿ-ի Ախ Նիստում:

Անցած շաբաթ քննիչները Վիեննայում հարցաքննել են սիրիացի 6 կասկածյալներից 5-ին: Նրանցից երկուսը վկայություններ են տվել, որ Լիբանանում Սիրիայի հատուկ ծառայությունների գործունեությանն առնչվող բոլոր փաստաթղթերը ոչնչացված են: Բացի դրանից, քննությունը պարզել է, որ Սիրիայի իշխանությունները ճնշումներ են գործադրել վկաներից մեկի նկատմամբ:

Զեկուցագրում նշվում է, որ Սիրիան ամեն կերպ փորձում է խանգարել Հարիրիի սպանության միջազգային քննության անցկացմանը: Քննիչները մասնավորապես ենթադրում են, որ Սիրիայի իշխանությունները ձերբակալել են վկաներից մեկի ազգականներին: ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Կոֆի Անանը հանձնախմբի զեկուցագիրն ԱԽ-ին է ներկայացրել կից գրությամբ, որտեղ նշվում է, որ Սիրիայի հետ քննիչների համագործակցությունը «միայն վերջերս է սկսել արդյունք տալ»: Ուստի ենթադրվում է, որ ՄԱԿ-ն առայժմ մտադիր չէ հակասիրիական պատժամիջոցներ ձեռնարկել:

Հարիրիի սպանությունը հետաքննող ՄԱԿ-ի անկախ հանձնախմբի գործունեության ժամկետը լրանում է դեկտեմբերի 15-ին, սակայն ակնկալվում է, որ ժամկետը երկարաձգվի: Ընդսմին Անվտանգության խորհուրդը պետք է փոխարինող գտնի Մեհլիսի համար, որը մտադիր է վերադառնալ հայրենիք եւ սանձնել Բեռլինի դատախազի պաշտոնը:

Իրաքյան 5 խմբավորումներ դեմ են դեկտեմբերի 15-ի «սատանայական» ընտրություններին

Իրաքյան ահաբեկչական 5 խմբավորումներ «Ալ Ղահդայի» գլխավորությամբ առաջին անգամ հանդես են եկել համատեղ հայտարարությամբ, որտեղ դեկտեմբերի 15-ին երկրում նախատեսված խորհրդարանական ընտրություններն անվանում են «սատանայական»:

Համացանցում տարածված հայտարարությունը ընտրություններն անվանում է «սատանայական ծրագիր», որի նպատակն է առաջ մղել «Բարձրյալի սահմանած օրենքները խախտող այսպես կոչված քաղաքական գործընթացը»:

Իրաքցիներին առաջարկվում է ընտրություններին մասնակցելու փոխարեն շարունակել սրբազան պատերազմը՝ ջիհադը, որի նպատակն է «ստեղծել Ղուրանի օրենքների եւ Մուհամեդ մարգարեի ավանդների վրա հիմնված իսլամական պետություն»:

Ինտերնետից չօգտվող իրաքցիների համար ծայրահեղականները տարածել են թռուցիկներ, որոնցում նշվում է, որ «անհավատների եւ նրանց կամակատարների դեմ պայքարը կշարունակվի»: Ասոշիեյթեդ պրես գործակալության տվյալներով, միայն երկուշաբթի օրը Բաղդադում իրականացված ահաբեկչություններից 15 մարդ է զոհվել:

Նույն օրն Իրաքում սկսվել է նախնական քվեարկություն, որին մասնակցել են զինվորականները, բանտարկյալները եւ հիվանդանոցների հիվանդները: RFI ռադիոկայանի տվյալներով, Իրաքի նախկին ղեկավար Սադդամ Հուսեյնը հրաժարվել է մասնակցել ընտրություններին:

Պ. Ք.

Շրջադարձ Հյուսիսային գազամուղից կստանա տարեկան 1,5 մլն եվրո

Գերմանիայի նախկին կանցլեր Գերհարդ Շրյոդերը, որը կառուցվող Հյուսիսային գազամուղի տնօրենների խորհրդի ղեկավարն է, ամեն տարի կստանա մոտ 1,5 մլն եվրո ռոճիկ: Գազամուղի բաժնետերերն են ռուսական «Գազպրոմը», գերմանական BASF եւ EON ընկերությունները: Համատեղ ձեռնարկությունում «Գազպրոմին» է պատկանում բաժնետոմսերի 51 տոկոսը:

«Գազետա» ինտերնետային հրատարակությունը նշում է, որ Շրյոդերի վարձատրությունը «Գազպրոմի» տնօրենների խորհրդի անդամի ռոճիկից գրեթե կրկնապատիկն է: Փորձագետները նրա բարձր ռոճիկը բացատրում են նրանով, որ Շրյոդերը ոչ միայն ընկերության գլխավոր կառավարիչն է, այլեւ զբաղվում է լոբբիստական գործունեությամբ եւ ի վիճակի է հարթելու Հյուսիսային գազամուղի նախագծի բոլոր մասնակիցների հնարավոր հակամարտությունները:

Բալթիկ ծովի հատակով Ռուսաստանից Գերմանիա գազամուղ անցկացնելու համաձայնություն էր ձեռք բերվել 2005 թ. սեպտեմբերին Վլադիմիր Պուտինի Գերմանիա կատարած այցելության ժամանակ:

Ավստրալիայի ոստիկանությունն օժտվում է արտակարգ լիազորություններով

Սիդնեյում ռասայական հողի վրա շարունակվող զանգվածային անկարգությունները զսպելու նպատակով Ավստրալիայի ոստիկանությունը օժտվելու է արտակարգ լիազորություններով: Այդ մասին տեղեկացնում է «Սիդնեյ մորնինգ հերալդ» թերթը՝ նշելով, որ Նոր Հարավային Ուելսի նահանգի խորհրդարանն արտահերթ նիստում նման որոշում է ընդունելու հինգշաբթի օրը: Երեկ **«Ազգը»** գրեց, որ Սիդնեյում կիրակի օրը մոտ 5000 անգլո-սաքսոններ հարձակվել են արաբ երիտասարդների վրա, քանի որ դրանից մեկ շաբաթ առաջ արաբները ծեծել էին երկու փրկարարների: Բացի դրանից, արաբ երիտասարդներն ու դեռահասները հաճախ հարձակվում են լողափին հանգստացողների վրա եւ ահաբեկում նրանց:

Չնայած այդ միջադեպերին, երկրի իշխանությունները դեմ են ռասիզմի դրսեւորումներին: Նոր Հարավային Ուելսի վարչապետ Մորիս Իեմն հայտարարել է, որ արաբների վրա զանգվածաբար հարձակվող «հանցագործները պատերազմ են հայտարարել երկրի հասարակությանը»: Պարզվում է, որ ոստիկանությանը արտակարգ լիազորություններով օժտելու օրինագիծը հավանություն կստանա, քանի որ այն պաշտպանում են թե՛ իշխանավորները եւ թե՛ ընդդիմությունը:

Արտակարգ միջոցառումները ներառում են մասնավորապես փակ գոտիների ստեղծում, փոխադրամիջոցների առգրավում, որոշ հասարակությունների փակում, ոգելից խմիչքի վաճառքի արգելում, անկարգությունների մասնակցելու համար բանտարկության ժամկետի ավելացում՝ 5 տարին դարձնելով մինչեւ 15 տարի:

Երեկ գիշեր Սիդնեյի փողոցներ դուրս եկան 450 ոստիկաններ: Ոստիկանության տվյալների համաձայն՝ միայն գիշերը զանգվածային անկարգությունների ընթացքում վիրավորվել է 7 մարդ, 11 օրինախախտներ ձերբակալվել են:

Պ. Ք.

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Հայոց ցեղասպանությունը հավաստող եւս երկու գիրք

Վկայում են ամերիկյան արխիվները

Բրիտանահայ պատմաբան, «Կոմիտաս» հրատարակչության տնօրեն Արա Սարաֆյանը վերջերս հրատարակեց երկու ծավալուն աշխատություններ, որ լուսաբանվում է Բոսֆորի ափերին ամերիկյան դիվանագիտական առաքելությունը Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին:

Առաջին գիրքը՝ ԱՄՆ Կոնգրեսի գրադարանում եւ պետական արխիվներում այսօր առկա Հայոց ցեղասպանության մասին վկայություններն են: Երկրորդը՝ Օսմանյան Թուրքիայում ԱՄՆ դեսպան Հենրի Մորգենթաուի օրագիրն է գրված Հայոց եղեռնի տարիներին: Այս գործում պատմաբանին իր անձնական աջակցությունն է ցուցաբերել դեսպանի թոռը, Նյու Յորքի Հոլոքոստի թանգարանի հիմնադիր-նախագահ, փաստաբան՝ Ռոբերտ Մորգենթաուն:

Անցյալ շաբաթ գրքերի շնորհանդեսը կայացավ Նյու Յորքի Հոլոքոստի թանգարանում: Միջոցառմանը նամակ-բողոքով հակազդել էր Նյու Յորքում Թուրքիայի պատվոնական ներկայացուցիչը: Դահլիճում ներկա էր, ի դեպ, թուրք ուսանողների մի խումբ: Նրանց առաջադրած հակափաստարկները, պատմության իմացության առումով, թերեւս, տգիտության բացառիկ դրսեւորումներ էին: Թուրքերի զավեշտի հասնող ժխտողական մոլեռանդությունը պատրաստ է հերքել նույնիսկ ակնհայտ վկայություններ, ներառյալ՝ ամերիկյան, գերմանական աղբյուրները: Նրանց մեջ, սակայն, կային երիտասարդներ, որոնք եկել էին այս թեմայի մասին տեղեկանալու, իրենց համար ճշմարտությունը պարզելու նպատակով:

Պատմաբան Արա Սարաֆյանի հրատարակած ամերիկյան վավերագրությունները Հայոց ցեղասպանության մասին խիստ կարեւոր նախաձեռնություն է այսօր ամերիկյան հասարակական կարծիքի ձեւավորման գործում: Պատմաբանի կարծիքով, այս խնդիրը երբեք չպետք է վրիպի մեր ուշադրությունից: Անհրաժեշտ է խթանել եղած հայկական վավերագիր աղբյուրների թարգմանական աշխատանքները անգլերեն եւ այլ լեզուներով:

Առաջիկայում գրքերը կներկայացվեն Կալիֆոռնիայում, ԱՄՆ այլ նահանգներում, ինչպես նաեւ՝ Եվրոպայում:

ՍԱՌԱ ԳԱՍՊԱՐՅԱՆ

Մշակույթ

Մոցարտի հանճարի վերջին ստեղծագործությունը՝ «Ռեքվիեմ» հոգեհանգստի պատարագը, միշտ էլ ունկնդիրների մեծ լսարան է հավաքում: Բայց այդ օրը հետաքրքրությունն առանձնահատուկ էր. վահանակի մոտ մաեստրո Օհան Դուրյանն էր: Նրա դիրիժորական վերջին ելույթը Հայաստանի մայրաքաղաքում տեղի էր ունեցել ճիշտ 5 տարի առաջ, Ա. Սողոմոնյանի անվան օպերայի եւ բալետի թատրոնի նվագախմբի վահանակի մոտ, որի գլխավոր դիրիժորն էր ինքն անցյալ դարի 70-ական եւ 90-ական թվականներին:

Սիմֆոնիկի երկրաշարժի 17-րդ տարելիցի օրը Կամերային երաժշտության տանը Վ. Ա. Մոցարտի «Ռեքվիեմը» հնչեց Հայաստանի կամերային նվագախմբի ու երգչախմբի (գեղ. ղեկ.՝ Արամ Ղարաբեկյան, խմբավար՝ Ռոբերտ Մլեքյան), մենեղգիչներ Արծվիկ Դեմուրչյանի (սոպրանո), Քրիստինե Սահակյանի (մեցցո-սոպրանո), Ռուբեն Նուրիջանյանի (տենոր), Վահան Մակվեցյանի (բաս) եւ Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախմբի փողայինների խմբի կատարմամբ: Դիրիժորն էր Հայաստանի ժողովրդական արտիստ Օհան Դուրյանը:

Հիրավի անուղղելի փաստ է. աշխարհահռչակ երաժիշտը Մոսկվայի սիմֆոնիկ նվագախմբի գլխավոր հրավիրյալ դիրիժորն է, շրջագայում է տարբեր քաղաքներում ու երկրներում, սակայն իր հայրենիքում ներկայումս երաժշտական համույթներում եւ ուսումնական հաստատություններում լայնորեն տարածված ինքնիշխանության նոր մեթոդների պատճառով զրկված է սեփական ժողովրդի առջեւ ելույթ ունենալու հնարավորությունից: «Ռեքվիեմի» կատարմանը ցույց տրված խանդավառ ընդունելությունը անկրկնելի մաեստրոյի հանդեպ համաժողովրդական անմար սիրո պերճախոս վկայությունն էր:

Օհան Դուրյանը միշտ եղել եւ մնում է Հայաստանի երաժշտական գագաթներից մեկը: Հանձին նրա ունենք արեւմտյան ռացիոնալիզմի եւ արեւելյան իմաստնության անհրաժեշտ համակեցություն, իսկ հայ լինելը իր ճշգրտումներն է մտցրել փիլիսոփայական ընդհանրացման նրա արվեստում: Դուրյանի անհատականությունը չի տեղավորվում ռոմանտիկ կամ դասական տիպի արտիստի ստանդարտներում: Եվ եթե 1970-ական թթ. մաեստրոյի մտածողության հուզականորեն իմպուլսիվ եւ անկեղծ դրամատիկ պսիխոլոգիզմը հակում էր դեպի էքսպրեսիվ-ռոմանտիկ անձի սահմանումը, ապա 1990-ական թթ. նրա ստեղծագործական ոճը նկատելիորեն փոխվեց: Մտածողության ինտրովերտ ուղղվածությունը այդ տարիներին ձեւավորեց գեղարվեստական ստեղծագործության արտաժամանակյա փիլիսոփայական ընկալման մեթոդը: Մոցարտ «Ռեքվիեմի» կատարումը Օհան Դուրյանի շնորհալի ղեկավարությամբ ձեռք բերեց հենց արտաժամանակյա ծավալի իմաստ, ուստի ունկնդիրների ներգործությունը եւս այդքան տպավորիչ էր: Դանդաղեցնելով «Ռեքվիեմի» բոլոր 12 մասերի տեմպերը, ասես ընդլայնելով ժամանակի սահմանները, մաեստրոն մոցարտյան երաժշտության ողբերգականության մեջ ներածեց թե՛ իր կյանքի փորձը եւ թե՛ մեր ընդհանուր ցավն ու հույսը: Կենտրոնական խմբերգային մասը՝ «Lacrimosa»-ն դարձավ ոչ միայն ստատուս-քվարական, այլեւ խիզախդրամատիկական, դրանով իսկ միավորվելով «Tuba mirum» 3-րդ մասի երաժշտության հոգեկան վեհության եւ «Benedictus» 6-րդ մասի խաղաղ օրհնության հետ:

Մենեղգիչների խառյակը, իմ կարծիքով, առավել հետաքրքրական հանդես եկավ 3-րդ եւ 5-րդ մասերում. բոլոր ձայներն առանձնանում էին իրենց անհատականությամբ, տեմբրային առումով հաջողությամբ լրացնելով իրար: Կարեւոր էր մենեղգիչների եւ երգչախմբի կատարման միասնական վոկալ ոճի արտահայտումը: Հայաստանի կամերային նվագախմբի երգչախումբը երգում էր մեծ ոգեւորությամբ, հետեւությամբ հաղթահարելով «Kyrie»-ի կրկնակի ֆուգայի տեխնիկական բարդությունները, տպավորություն գործելով «Dies irae»-ի հզորությամբ եւ «Sanctus»-ի հնչողության փայլով:

«Et Lux perpetua luceat» Kyrie

(«Եվ կփայլի հավերժական լույսը»)


PHOTOLURE

Հայաստանի կամերային նվագախումբը՝ Օհան Դուրյանի գաղափարների հավատարիմ դաշնակիցը, կրկին հաստատեց իր պրոֆեսիոնալ կարգը եւ ոչ միայն «կամերային», այլեւ «սիմֆոնիկ» լինելու կարողությունը: Ընդարձակ, ձգվող շունչը զուգորդվում էր յուրաքանչյուր ֆրազի շոշափելի բաբախյունին, ինչը երաժշտությունը դարձնում էր կենդանի եւ դինամիկ:

Կարկառուն դիրիժոր Օհան Դուրյանը այդ անմոռանալի երեկոյի ընթացքում վարպետության եւ հոգեւոր սոդիցիզմի դաս տվեց, 83 տարեկանում բոլոր ունկնդիրներին ստիպելով հավատալ հավերժական լույսի եւ ճշմարտության ճաճանչմանը:

ՍԱՆՏԱՐՈ ՍԱՐԳՍՅԱՆ,
Արվեստագիտության դոկտոր

Ի՞նչ կուզեք խաղացեք, ինչպե՞ս կուզեք խաղացեք, բայց հայոց լեզվի դեմ մի՛ խաղացեք



Ցավալի փաստ է, որ հայոց լեզուն խաթարող վարակի աղբյուրի են վերածել տարբեր, մասնավորապես հեռուստատեսությամբ եթեր տրվող գովազդները, մինչդեռ հենց հեռուստատեսությունն է՛ր պետք է լինեն հայոց լեզվի անաղարտության օրենսդրական պահանջները հարգող-կիրառողների առաջին շարքում: Այս գովազդների շարքում իր գեղագիտական անճաշակությամբ ու լեզվական բարբարոսությամբ առանձնանում է Ավան թաղամասում գտնվող մի տնտեսվարող, որի անգլերեն անունը թարգմանվում է «խաղերի խաղք»: Դեհ, քանի որ խաղեր են կազմակերպում, «աղերոները» իրենց են վերապահել նաեւ հայոց լեզվի հետ ըստ իրենց լեֆի խաղալու-բացառիկ իրավունք (դեռ չենք խոսում արդի հայաստանյան իրականությունը հիանալիորեն բնորոշող «Մեր դեմ խաղ չկա» արտահայտությունը գովազդում գոռգոռալու այլանդակության մասին): Գովազդի հերոսներից մեկը, որն իր կաշվից դուրս է գալիս կարելի եղածին չափ բքամիտ ներկայանալու համար, իր խոսքի յուրահատուկ բային կցում է մի քանի անկապ տառեր. օրինակ՝ «անցկացվում» բայն արտասանում է «անցկացըցվըցնումը», «արվում»-ը՝ «արվըցվում»...

Տարօրինակն ու դատապարտելին ոչ միայն այս գովազդի ու լեզվական այլանդակության բացառիկ իրավատեր տնտեսվարողն ու գովազդը հեռարձակող հեռուստաընկերություններն են, այլեւ՝ հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային (ճիշտն է՝ պետական, -Գ. Ս.) հանձնաժողովն ու լեզվի պետական տեսչությունը, որոնք ի պաշտոնե պարտավոր են առաջն առնել նման լեզվական վարակների: Մինչդեռ հարկատուներիս հաշվին ապրող այս պետական մարմինները էջի ականջին ճնած են, թույլ տալով, որ ո՛վ ուզի, ե՛րբ ուզի, ի՛նչ ուզի եւ ինչպես ուզի՝ խաղ տա հայոց լեզվի դեմ:

Նման գովազդատուներին խորհուրդ կտայինք հեռու մնալ նման անճաշակ, անվայել ու այլասերող գովազդներ պատրաստելուց: Եթե այս մաքուր հայերենով չեն հասկանում մեր ասելիքը, իրենց «լեզվով» ասենք. «Ապեր՛ն, կորչըչվեցվեք մեր հեռուստաէկրաններից»: Կարծում ենք, ձեր այս «հայերենով» կհասկանաք մեր ասելիքը. մի ստիպեք մեզ դիմել...թուրքերենի օգնության:

Այս առիթով դիմում ենք ՀՀ բոլոր արտադրողներին. ձեր որոշ արտադրանքներ իսկապե՛ս շատ ենք սիրում, սակայն մեր հայոց լեզուն ոչ միայն շատ ավելի շատ ենք սիրում, այլեւ պատրաստ ենք որպես սրբություն: Ձեր մարդկային, ազգային եւ անձնական արժանապատվության իսկական ցուցիչը ձեր արտադրանքում հայոց լեզվի պատշաճ գործածությունն է: Ապացուցեք, որ տե՛ր եք այդ արժանապատվության:

ԳԵՎՈՐԳ ՅԱՍԱԲՅԱՆ,

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՓՈԽԵՐԳՈՐԾՈՒՄ

Պարսից լեզվի եւ գրականության բարեկամների «Փարսիան» ՀԿ-ն սկսեց իր աշխատանքը

Դեկտեմբերի 7-ին ՀՀ ԳԱ ակադեմիայում տեղի ունեցավ Պարսից լեզվի եւ գրականության բարեկամների «Փարսիան» հասարակական կազմակերպության պաշտոնական բացման արարողությունը, որ Հայաստանի երկրաշարժի զոհերի եւ Իրանում վերջերս տեղի ունեցած օդային աղետի զոհերի հիշատակին մեկ տարի առաջ պարսից լեզվի եւ գրականության մի խումբ դասախոսներ, թարգմանիչներ, մշավորականներ, ուսուցիչներ, ուսանողներ եւ բարեկամներ ցանկություն հայտնեցին Հայաստանում պարսից լեզվի եւ գրականության բարեկամներին համախմբել մի հարկի տակ: Այսպիսով, նույն անձանց մասնակցությամբ տեղի ունեցավ հանդիպում եւ ստեղծվեց Պարսից լեզվի եւ գրականության բարեկամների «Փարսիան» ՀԿ-ն, իր ղեկավար կազմով եւ կանոնադրությամբ, նպատակ ունենալով ամրապնդել Իրան-Հայաստան բարեկամական կապերը, աշխուժացնել Հայաստանի, այդ թվում ԳԱԱ իրանագիտական կենտրոնների կապերն Իրանի եւ աշխարհի իրանագիտական կենտրոնների հետ, նպաստավոր պայմաններ ստեղծել Հայաստանում պարսից լեզվի եւ գրականության ուսանողների ու դասախոսների մասնագիտացման համար, կազմակերպել մասնագիտական-վերապատրաստման դասընթացներ Իրանում եւ Հայաստանում, մասնակցել պարսից լեզվին նվիրված միջազգային կոնֆերանսներին ու համաժողովներին:

Հայաստանում Իրանի մշակույթի կենտրոնի նախագահ Ռեզա Աթուֆին անդրադառնալով այն փաստին, որ Հայաստանում պարսկերենի նկատմամբ մշտապես եղել է մեծ հետաքրքրություն ավելացրեց. «Սրանից մի քանի ժամանակ առաջ պարսից լեզվի եւ գրականության մի խումբ դասախոսներ, թարգմանիչներ, մշավորականներ, ուսուցիչներ, ուսանողներ եւ բարեկամներ ցանկություն հայտնեցին Հայաստանում պարսից լեզվի եւ գրականության բարեկամներին համախմբել մի հարկի տակ: Այսպիսով, նույն անձանց մասնակցությամբ տեղի ունեցավ հանդիպում եւ ստեղծվեց Պարսից լեզվի եւ գրականության բարեկամների «Փարսիան» ՀԿ-ն, իր ղեկավար կազմով եւ կանոնադրությամբ, նպատակ ունենալով ամրապնդել Իրան-Հայաստան բարեկամական կապերը, աշխուժացնել Հայաստանի, այդ թվում ԳԱԱ իրանագիտական կենտրոնների կապերն Իրանի եւ աշխարհի իրանագիտական կենտրոնների հետ, նպաստավոր պայմաններ ստեղծել Հայաստանում պարսից լեզվի եւ գրականության ուսանողների ու դասախոսների մասնագիտացման համար, կազմակերպել մասնագիտական-վերապատրաստման դասընթացներ Իրանում եւ Հայաստանում, մասնակցել պարսից լեզվին նվիրված միջազգային կոնֆերանսներին ու համաժողովներին:

Հայաստանում Իրանի մշակույթի կենտրոնը որպես առաջին քայլ ձեռնամուխ է եղել մարտի կեսերին մի խումբ ուսանողների եւ դասախոսների վերապատրաստման դասընթացներին մասնակցելու համար Իրան ուղարկել եւ կազմակերպությանն անհրաժեշտ գրքերով ապահովել, ինչը կարելի է Իրանի մշակույթի կենտրոնի նվերը համարել Պարսից լեզվի եւ գրականության կազմակերպությանը»:

Այնուհետեւ ընթերցվեց Իրանի իսլամական կապերի եւ մշակույթի կազմակերպության նախագահ Մոհամադի Առաղիի ուղերձը Հայաստանում Պարսից լեզվի եւ գրականության բարեկամների ՀԿ-ի պաշտոնական բացման առիթով: Ուղերձում ասվում է. «Այսօր Հայաստանը պարսից լեզվի ուսուցման առումով ԱՊՀ երկրների շարքում Տաջիկստանից հետո (պարսկերենը վերջինիս պետական լեզուն է) գտնվում է առաջին տեղում, ինչը ուրախալի փաստ է իրանցի մշակութային գործիչների համար, որից ելնելով պետք է նպաստավոր պայմաններ ստեղծենք Հայաստանում պարսից լեզվի տարածման եւ Իրանի ու Հայաստանի համընդհանուր ժառանգությանը վերաբերող հետազոտությունները կազմակերպելու տեսակետից: Ուղերձում նշվել է նաեւ. «Հայաստանի պարսից լեզվի ուսումնական հաստատություններում գործող հարուստ գրադարանները, պարսկերեն լեզվի դասախոսների եւ ուսանողների մասնակցությունն Իրանում անցկացվող վերապատրաստման կուրսերին, ԵՊՀ-ի իրանագիտության ամբիոնի եւ Ֆիրդուսիի դահլիճի, Երեւանի Բրյուսովի անվ. օտար լեզուների համալսարանում իրանագիտական կաբինետի, Երեւանում «Հրաչյա Աճառյան», «Հայբուսակ», Սլավոնական, «Ֆիրդուսի» համալսարաններում եւ Վ. Սարգսյանի անվ. ռազմական ինստիտուտում պարսից լեզվի ամբիոնների բացումը եւ ավելի քան 20 դպրոցներում պարսից լեզվի դասավանդումը վկայում են Հայաստանում պարսից լեզվի տարածմանը նպաստող հետեւողական աշխատանքների մասին, որի համար պետք է շնորհակալություն հայտնել այդ երկրում ԻհՀ մշակութային գործիչներին եւ Հայաստանի պետական մարմիններին ու մշակութային գործիչներին»:

Այնուհետեւ ՀՀ գիտության եւ կրթության փոխնախարար Արա Ավետիսյանն իր ելույթի ժամանակ ասաց. «Հայաստանի եւ Իրանի ժողովուրդների մեջ բավականին լավ պահպանված եւ սերունդից սերունդ փոխանցված արժեքներ կան: Մեր կրթական համակարգում փոխանակման ծրագրերով բազմաթիվ ուսանողներ Հայաստանում եւ Իրանում մասնագիտական կրթություն են ստանում, եւ եթե այսօր Հայաստանում Իրանի ուսանողների թիվը հազարների է հասնում, սա արդեն լավ հարեւանության ձեւավորված խոր համագործակցության արդյունքն է»: Նա ավելացրեց. «Երկու ժողովուրդների կրթագիտական համակարգը ունի լուրջ պոտենցիալ համատեղ ծրագրեր ներկայացնելու աշխարհին»:

Հայաստանի մշակույթի եւ երիտասարդության հարցերի նախարարի տեղակալ Գեւորգ Գյուրջյանը սույն միջոցառման ժամանակ իր հերթին հայտնեց. «Պարսկերենը իրանցիների լեզուն է, բայց պարսկերենով ստեղծված հին եւ միջնադարյան գրականությունը, մասնավորապես Ֆիրդուսու, Խայամի եւ այլոց բարձրարժեք պոեզիան բոլոր ժողովուրդների ժառանգությունն է»: Նա նույնպես հույս հայտնեց, որ սույն ՀԿ-ն կնպաստի Իրանի ժողովրդի գրական ժառանգության լայն ճանաչելիությանն ու տարածմանը Հայաստանում:

Միջոցառման ընթացքում ելույթ ունեցան նաեւ Պարսից լեզվի եւ գրականության ՀԿ-ի նախագահ Ժորժ Աբրահամյանը, խորհրդի անդամներ Վրեժ Փարսադանյանը, Նվարդ Առաքելյանը եւ ԱՈՔՍ մշակութային կենտրոնի փոխտնօրեն Անահիտ Պողոսյանը, որոնք հույս հայտնեցին, Պարսից լեզվի եւ գրականության բարեկամների ՀԿ-ն իր ներդրումը կունենա երկու երկրների բարեկամական կապերի զարգացման գործում:

ԺՈՐԺ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ,

ՕԱԳՐԱՆԿԱՐՅԻ ԱՅՔԵՐՈՎ



Լեւոն Արոնյանը մտավ եզրափակիչ

Հայաստանի շախմատիստներից ներկայում ամենաբարձր վարկանիշն ունեցող Լեւոն Արոնյանը շարունակում է տպավորիչ մրցելույթները Խանտի Մանսիյսկում ընթացող շախմատի աշխարհի գավաթի խաղարկությունում: Կիսաեզրափակիչում Արոնյանի մրցակիցը ֆրանսիացի Էթիեն Բաֆրոն էր, որը մրցաշարի մասնակիցներից երկրորդ ամենաբարձր վարկանիշն ունի: Առաջին պարտիան ավարտվել էր ոչ-ոքի: Ընդ որում, սպիտակներով խաղացող Բաֆրոյին միայն հավերժական շախի շնորհիվ էր հաջողվել փրկել պարտիան, քանի որ Արոնյանը նորույթ էր կիրառել եւ դժվարին կացության մեջ գցել մրցակիցներին:

Եվ ահա երեկ տեղի ունեցավ մրցակիցների 2-րդ պարտիան, որում Լեւոնը խաղում էր սպիտակներով: Նա հիանալի անցկացրեց ողջ պարտիան եւ արժանի հաղթանակ տոնեց: Մրցախաղը շահելով 1,5-0,5 հաշվով, Լեւոն Արոնյանը մտավ եզրափակիչ: Այսպիսով, հայ գրոսմայստերը հաջողությամբ հաղթահարեց մրցաշարի 6 փուլերի արգելքները: Բարձունքը նվաճելու համար նրան մնացել է եւս մեկ, բայց ավելի դժվարին ու վճռորոշ քայլ կատարել: Ճիշտ է, առայժմ հայտնի չէ, թե եզրափակիչում ով է լինելու Արոնյանի մրցակիցը: Կիսաեզրափակիչի մյուս զույգում առայժմ հաղթողը չի որոշվել: Ուկրաինացի Ռուսլան Պոնոմարյովի եւ ռուսաստանցի Ալեքսանդր Գրիշչուկի մրցավեճում գրանցվել է ոչ-ոքի: Կայացած երկու պարտիաներում էլ մրցակիցները խաղաղ դաշն են կնքել: Այնպես որ այսօր Պոնոմարյովին ու Գրիշչուկին հարկ կլինի կրկին նստել խաղասեղանների շուրջը՝ որոշելու Արոնյանի մրցակցին: Իսկ ահա հայ գրոսմայստերը վճռորոշ մրցախաղից առաջ լրացուցիչ մեկ օր հանգստանալու հնարավորություն կունենա, ինչը շատ կարեւոր հանգամանք է, եթե հաշվի առնենք, որ մրցաշարում լարվածությունը բավական մեծ է: Այլ կերպ լինել չէր էլ կարող, քանի որ նոկաուտ համակարգով անցկացվող մրցաշարում ամեն մի վրիպում կարող է ճակատագրական լինել:

5-8-րդ տեղերի համար մրցավեճում Բորիս Գելֆանդը 2-0 հաշվով հաղթեց Միխայիլ Գուրեւիչին: Այժմ Գելֆանդը պետք է մրցախաղ անցկացնի 5-6-րդ տեղերի համար: Նրա մրցակիցն այդ մրցախաղում դեռեւս անհայտ է, քանի որ Ռուբլյովսկի-Բարեւ մրցախաղում գրանցվել է ոչ-ոքի: Այս զույգն այսօր սիրված կլինի լրացուցիչ մրցախաղ անցկացնել: Նոկնոքիսի ճակատագիր է սպասվում նաեւ 9-12-րդ տեղերի համար պայքարողներին: Այստեղ եւս հավասարակշռություն է պահպանվում Մալախով-Կառլսեն, Կամսկի-Վալեխո պարտիաներում: 13-16-րդ տեղերի համար մրցավեճում Դրեեւը հաղթեց Սակաեւին, իսկ Լոթեի եւ Վան Վելիի մրցավեճում գրանցվեց ոչ-ոքի:

Առաջնության մրցակարգը կխնարկվի ՀՖՖ գործկոմում

ՀՖՖ նախագահն ամփոփեց մրցաշրջանի արդյունքները

Ավանդույթի համաձայն, ՀՖՖ նախագահ Ռուբեն Հայրապետյանը մրցաշրջանի արդյունքները ամփոփելու նպատակով հանդիպեց լրագրողներին: Անդրադառնալով ավարտված առաջնությանը, նախագահը նշեց, որ բոլորիս է հայտնի մեր առաջնության մասնակից թիմերի ցածր խաղամակարդակը, ֆինանսական ոչ կայուն վիճակը, որի հետեւանքով էլ մրցաշարի նկատմամբ հետաքրքրությունն այս տարի էլ առանձնապես մեծ չէր: Ընդհանուր առմամբ, առաջնությունն անցավ նորմալ պայմաններում: Հիմնական պայքարը ծավալվեց ֆինանսապես ֆիզ թե շատ կայուն 4 ակումբների միջեւ: Մրցավարությունից էլ, ի տարբերություն նախորդ մրցաշրջանի, նախագահը համեմատաբար գոհ էր:

Պատասխանելով հաջորդ մրցաշրջանի մրցակարգի, թիմերի քանակի ավելացման հարցերին, նախագահը նշեց, որ առաջին խմբում կան ֆինանսապես ապահովված ակումբներ, որոնք ցանկություն են հայտնել հաջորդ մրցաշրջանում հանդես գալ ուժեղագույնների խմբում: Այս հարցը կխնարկվի այսօր կայանալիք ֆեդերացիայի գործկոմի նիստում: Ընդհանրապես ֆուտբոլի ֆեդերացիան ծրագրել էր տարիների ընթացքում աստիճանաբար ավելացնել բարձրագույն խմբի թիմերի քանակը: Այնպես որ, եթե գործկոմը դրական պատասխան տա թիմերի դիմում-խնդրանքներին, ապա ամեն ինչ տեղի կունենա ըստ նախապես ծրագրվածի:

Ռուբեն Հայրապետյանն իր դժգոհությունն արտահայտեց որոշ ակումբների ղեկավարներից, որոնք չեն մասնակցում մրցաշրջանից առաջ առաջնության մրցակարգի շուրջ կազմակերպվող քննարկումներին, փոխարենը՝ այդ մրցակարգից իրենց դժգոհությունն արտահայտելով առաջնության ընթացքում: Լրագրողների կողմից առաջարկ եղավ նոր կանոնակարգի տարբերակի քննարկմանը մասնակից դարձնել նաեւ իրենց, ինչպես նաեւ մարզիչների համար պարտադիր դարձնել խաղերից հետո զանգվածային լրատվամիջոցների հետ ճեպազրույցների անցկացումը:

Լրագրողներին, բնականաբար, հետաքրքրում էր ազգային հավաքականի նոր սավոր մարզիչ Հենկ Վիսմանի հետագա ճակատագիրը: Ռուբեն Հայրապետյանը ցանկանում է, որպեսզի մարզիչը շարունակի աշխատանքը: Պարզապես վերջինս ընտանեկան խնդիրներ ունի եւ առաջիկա բանակցությունների ընթացքում վերջնականապես կպարզվի Վիսմանի Հայաստանում մնալ-չմնալու հարցը: Ինչ վերաբերում է ազգային հավաքականի ելույթների գնահատականին, ապա ըստ նախագահի, կային օբյեկտիվ եւ սուբյեկտիվ պատճառներ, որոնք հնարավորություն չտվեցին պատշաճ մակարդակով հանդես գալ ընտրական մրցաշարում, որում, իրոք, ուժեղ մրցակիցներ էին ընդգրկված: Մրցաշրջանի ընթացքում հավաքականի մարզիչների փոփոխությունը, նաեւ կատարված սերնդափոխությունը չէին կարող չանդրադառնալ հավաքականի մրցելույթների վրա: Ըստ նախագահի՝ Հենկ Վիսմանին հաջողվել է ֆուտբոլային մարտունակ կոլեկտիվ ստեղծել, որը կարող է ընտրական հաջորդ մրցափուլում ավելի լավ հանդես գալ: Հավաքականի նախապատրաստական ծրագիրը ավելի կկոնկրետացնա հունվարի 27-ին կայանալիք Եվրոպայի առաջնության ընտրական մրցաշարի վիճակահանությունից հետո: Սակայն այժմ էլ արդեն հայտնի է, որ փետրվարին մեր ընտրանին Կիպրոսում կմասնակցի միջազգային մրցաշարի: Նախատեսվում է նաեւ Հորդանանի հետ հեռածգված հանդիպման անցկացումը Երեւանում: Ի դեպ, այդ խաղում հնարավոր է կազմակերպվի հավաքականի վետերան ֆուտբոլիստների հրաժեշտի արարողությունը:

Տարիքային մյուս խմբերի հավաքականներն էլ հաջող հանդես չեկան, թեեւ մինչեւ 19 տարեկանների հավաքականը հանդես եկավ Եվրոպայի պատանեկան առաջնության եզրափակիչ փուլում: Ըստ նախագահի, այստեղ էլ որոշ առանցքային ֆուտբոլիստների անձնագրերի հետ կապված խնդիրների պատճառով հնարավոր չեղավ հավաքագրել ուժեղագույն կազմը, ինչն էլ անդրադարձավ մրցելույթների վրա: Եվրագավաթների մասնակից թիմերից նախագահը առանձնացրեց միայն «Բանանցի» հաջող ելույթները, իսկ ահա «Փյունիկի» ղեկավարությունն, ի տարբերություն նախորդ տարիների, չկարողացավ ուժեղացնել թիմի կազմը միջազգային ասպարեզ դուրս գալուց առաջ:

Ինչպես հայտնի է, մինչեւ 17 տարեկանների Եվրոպայի առաջնության ընտրական 1-ին փուլի հանդիպումները կայանալու են Երեւանում: Նախագահը տեղեկացրեց, որ մրցաշարի հանդիպումները կկայանան «Նաիրի» եւ «Հանրապետական» մարզադաշտերում: Մոտ օրերս կնշանակվի հավաքականի գլխավոր մարզիչը եւ կկազմվի թիմի նախապատրաստության ծրագիրը, որն անպայման նախատեսում է ուսումնամարզական հավաքներ արտերկրում: Ռուբեն Հայրապետյանը տեղեկացրեց, որ բանակցություններ են ընթանում «Նանսիի» հայազգի ֆուտբոլիստ Սարգսյանի հետ Հայաստանի ազգային հավաքականում հանդես գալու շուրջը: Բացառված չէ, որ նրա հետ անձամբ հանդիպի ՀՖՖ նախագահը:

Խոսք գնաց ՈՒԵՖԱ-ի կողմից Հայաստանում արհեստական փոքր մարզադաշտերի կառուցման աշխատանքների մասին: Ըստ նախագահի, արդեն անհրաժեշտ պարագաները բերվել են Հայաստան եւ Կենտրոն համայնքում սկսվելու են աշխատանքները: Ինչ վերաբերում է մարզերում ֆուտբոլի զարգացմանն ուղղված աշխատանքներին, ապա ըստ նախագահի, ֆուտբոլի ֆեդերացիան միայնակ չի կարող դա իրականացնել: Նա ցավով նշեց, որ բացառությամբ Տավուշի մարզպետի, մյուս մարզերի ղեկավարներին ընդհանրապես չի հետաքրքրում ֆուտբոլը: Այս հարցում պետական մոտեցում է անհրաժեշտ:

ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԶԱԿԱՆ ԱՌՈՐՅԱՅԻՑ

Նոր մարզահամալիր Սավրոպոլի երկրամասում

Ինչպես տեղեկացնում է Ռոսաստանի հայերի «Երկրամաս» թերթը, Սավրոպոլի երկրամասի Սուվորովսկայա ավանում տեղի է ունեցել բոնցֆամարտի մարզահամալիրի շահագործման հանձնման հանդիսավոր արարողությունը: Այն կառուցվել է Ռոսաստանի հայերի միության Սավրոպոլի երկրամասի նախագահ, տեղի «Ուտարտու» բոնցֆամարտի ակումբի նախագահ Ռազմիկ Արամյանի ջանքերով: Սուվորովսկայա ավանը բազմազգ բնակավայր է, որտեղ տասնամյակներ շարունակ կողք-կողքի բնակվում են ռուսներն ու հայերը, հույներն ու ուկրաինացիները: «Ուտարտու» ակումբի հիմնադիր Ռազմիկ Արամյանն էլ այստեղ է մեծացել եւ կարետրում է, որ տեղի տղաները հնարավորություն կունենան ուժեղագույնին որոշելու ռինգում, այլ ոչ թե փողոցային կռվում:

Մարզահամալիրի հանդիսավոր բացման եւ օծման արարողությանը ներկա էին Սավրոպոլի հայկական համայնքների ղեկավարները, տեղի ադմինիստրացիայի ներկայացուցիչներն ու բնակիչները: Արարողությունից հետո կայացավ բոնցֆամարտի յուրօրինակ հանդիպում տեղի «Ուտարտու» ակումբի եւ Հայաստանի օլիմպիական հերթափոխի հանրապետական ուսումնարանի բոնցֆամարտիկների միջեւ:

Մրցաշարն անցկացվեց տարիքային մի քանի խմբերով (13-18 տարեկաններ), քաշային ութ կարգերում (32-70 կգ) եւ նվիրված էր Սուվորովսկայա ավանի հայ համայնքի հիմնադիր Դուրսուն Արամյանի հիշատակին: Հանդիպումն ավարտվեց ոչ-ոքի (4-4): Հաջորդ տարի պատասխան այցով Հայաստան կժամանեն Սավրոպոլի ուժեղագույն բոնցֆամարտիկները:

Ամենահարուստ մարզուհին Մարիա Շարապովան է

Ռուսական «Ֆինանս» ամսագիրը հրապարակել է ռուսաստանցի ամենահարուստ 100 մարզիկների ցուցակը: Այն գլխավորում է 18-ամյա թենիսիստուհի Մարիա Շարապովան, որն այս տարի թենիսի մրցաշարերում եւ գովազդային պայմանագրերով վաստակել է 14,5 մլն դոլար: Երկրորդ հորիզոնականը զբաղեցնում է բասկետբոլի ազգային ընկերակցության «Յուտա ջազ» թիմի խաղացող Անդրեյ Կիրիլենկոն, որի եկամուտը 10,97 մլն դոլար է: Առաջատար եռյակը եզրափակում է «Նյու Յորք Այլենդերսի» հոկեյիստ Յաշինը՝ 7,6 մլն դոլար:

Այս տարի 100 ամենահարուստ մարզիկների ընդհանուր եկամուտը կազմել է 179 մլն դոլար: Անցյալ տարի այն կազմում էր 195 մլն դոլար: Ըստ ամսագրի, դա պայմանավորված է այն բանով, որ հոկեյի ազգային ընկերակցության թիմերում այս մրցաշրջանից աշխատավարձերը կրճատվել են 24 տոկոսով: Բացի այդ, ցուցակում հոկեյիստների քանակը 5-ով կրճատվել է եւ այժմ հասնում է 60-ի: Փոխարենը երկու անգամ ավելացել է բասկետբոլիստների թիվը, որն այս տարվա ցուցակում հասնում է 6-ի: Ցուցակը համալրել են Սերգեյ Մոնեյն ու Վիկտոր Խրյապան, որոնք տեղափոխվել են բասկետբոլի ազգային ընկերակցության թիմեր, ինչպես նաեւ ամերիկացի Ջոն Ռոբերտ Հոլդենը, որն այս ամռանը ՈԴ հավաքականի կազմում հանդես եկավ բասկետբոլի Եվրոպայի առաջնությունում:

Ներկայացնում ենք ռուսաստանցի 10 ամենահարուստ մարզիկների ցուցակը:

1. Մարիա Շարապովա	թենիս	14,5
2. Անդրեյ Կիրիլենկո	բասկետբոլ, «Յուտա ջազ»	10,97
3. Ալեքսեյ Յաշին	հոկեյ, «Նյու Յորք Այլենդերս»	7,6
4. Նիկոլայ Խաբիբուլին	հոկեյ, «Չիկագո»	6,75
5. Իլյա Կովալչուկ	հոկեյ, «Ատլանտա»	6,5
6. Սերգեյ Ֆյոդորով	հոկեյ, «Կոլամբուս»	6,08
7. Կոնստանտին Տզյու	բոնցֆամարտ	5,5
8. Ալեքսեյ Կովալով	հոկեյ, «Մոնրեալ»	4,5
9. Ալեքսեյ Ժամնով	հոկեյ, «Բոստոն»	4,1
10. Սերգեյ Զուբով	հոկեյ, «Դալաս»	4

Վիերին Իտալիայի վաստակյալ ֆուտբոլիստն է

Իտալիայում ընդունված ավանդույթ է լավագույններից բացի որոշել նաեւ «Ա» սերիայի վաստակյալ ֆուտբոլիստին: Նման հարցում է կատարել «Catersport» ռադիոհաղորդումը, որը եթեր է հեռարձակում RAI ընկերությունը: Հարցման արդյունքներով Իտալիայի «Ա» սերիայի առաջնության վաստակյալ ֆուտբոլիստ է ճանաչվել 32-ամյա հարձակվող Քրիստիան Վիերին, որը ստացել է 2992 ձայն: Դա 3 անգամ գերազանցում է 2-րդ տեղը զբաղեցրած «Ինտերի» կիսապաշտպան Սանտյագո Սոլարիի ստացած ձայների քանակը:

Քրիստիան Վիերիի համար իրոք ընթացիկ մրցաշրջանն անհաջող դասավորվեց: Ամռանը նա սիրված էր հեռանալ «Ինտերից», որտեղ հայտնվել էր Ադրիանոյի եւ Օբաֆեմի Մարտինսի հետ լուրջ մրցակցության մեջ ու կորցրել տեղը հիմնական կազմում: Սակայն «Միլանում» էլ նրա գործերը լավ չընթացան: Թիմի կազմում 12 խաղում նրան ընդամենը 2 անգամ է հաջողվել գրավել մրցակիցների դարպասները: «Միլանում» էլ Վիերին զգում է Անդրեյ Շեւչենկոյի եւ Ալբերտո Զիլարդինոյի լուրջ մրցակցությունը:

Նախկինում վաստակյալ ֆուտբոլիստի դերում էին հայտնվել «Յուվենտուսի» պաշտպան Նիկոլա Լեգրոտալյեն եւ աշխարհի չեմպիոն բրազիլացի Ռիվալդոն:

Նոր մրցանակ

Աշխարհի առաջնությունների պատմության մեջ առաջին անգամ հատուկ մրցանակ կհանձնվի մրցաշարի լավագույն երիտասարդ ֆուտբոլիստին: Մրցանակը ստանալու հնարավորություն կունենան մինչեւ 1985 թ. հունվարի 1-ը ծնված ֆուտբոլիստները, որոնք իրենց լավագույն կողմերով կդրսեւորեն հաջորդ ամռանը Գերմանիայում կայանալիք ֆուտբոլի աշխարհի առաջնությունում:

Մրցանակի տերը կորոշվի ՖԻՖԱ-ի տեխնիկական կոմիտեի անդամների եւ ֆուտբոլասերների քվեարկության արդյունքում: Մասնագետների կարծիքով, նոր մրցանակի գլխավոր հավակնորդները կլինեն անգլիացի Ուեյն Ռունին, արգենտինացի Լիոնել Մեսին եւ գերմանացի Լուկաս Պոդոլսկին:

Էջը պատրաստեց ԱՐՈՍ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

ԱԶԳ **Օրվա հետքերով**

Եվրամիությունը Հարավային Կովկասի...

1-ին էջից

Հայաստանի արգործնախարարի մամլո խոսնակ Համլետ Գասպարյանն «Ազատություն» ռադիոկայանին ասել է, որ Բրյուսելում պետք է կայանար ԵՄ «տրոյկայի» եւ հարավկովկասյան երեք պետությունների արգործնախարարների 7-րդ նիստը, սակայն Ադրբեջանի եւ Կիպրոսի առկա տարաձայնությունների պատճառով փոխվել է ոչ պատշաճակա՝ Փաստորեն, Բրյուսելում արգործնախարարների հանդիպումը ԵՄ անդամ 25 պետությունների արգործնախարարների հետ, որով պետք է ազդարարվեր ԵՄ-ի հետ պատշաճական բանակցությունների մեկնարկը, վերածվել է ոչ պատշաճական հանդիպման:

Հայաստանը, Վրաստանը եւ Ադրբեջանը եվրոպական հարեւանության քաղաքականության կամ «Ընդլայնված Եվրոպա. նոր հարեւանություն» ծրագրի շրջանակներում ընդգրկվել էին 2004 թ. հունիսին: Այս ծրագիրը ենթադրում է Հարավային Կովկասի եւ ԵՄ-ի ավելի սերտ հարաբերություններ: Սա, անշուշտ, չի նշանակում, որ հարավկովկասյան հանրապետությունների՝ ԵՄ-ին անդամակցելու խնդրանքը խոսքում է, սակայն կարող է լինել հեռանկար:

Նոյեմբերի 28-ին Երեւանում, ապա հաջորդ օրը Թբիլիսիում ԵՄ պատվիրակությունը եվրոպական հարեւանության քաղաքականության շրջանակներում Հայաստանի եւ Վրաստանի հետ անցկացրել էր գործողությունների ծրագրի առաջին փուլը: Պատվիրակությունը չէր մեկնել Բաքու՝ Ադրբեջանի եւ ԵՄ անդամ Կիպրոսի միջեւ ծագած խնդիրների պատճառով: Ադրբեջանական «Էխո» գրում է, որ դեկտեմբերի 12-ին խորհրդակցություններ են սկսվել նաեւ Ադրբեջանի հետ:

ԵՄ-ին չանդամակցող պետությունների հետ հարաբերությունների հանձնակատար Բենիտա Ֆերերո-Վալդները Հարավային Կովկասի երկրների ԵՄ-ի հետ պատշաճական բանակցությունների մեկնարկը ոչ պատշաճական հանդիպման վերածելու առնչությամբ ասել է. «Մեր փորձագետներն այժմ երեք երկրներում են, եւ միայն նրանց վերադարձից հետո ԵՄ անդամ պետությունների խորհուրդը կհստակեցնի՝ քաղաքական առումով ինչպե՞ս է հնարավոր գործողությունների ծրագրի ընդունումը հարավկովկասյան երեք պետությունների պարագայում»:

Հարավային Կովկասում ԵՄ հատուկ ներկայացուցիչ Հեյկի Տալվիտիեն այս տարի Երեւանում տված ասուլիսներից մեկում նշել էր, որ Մոսկվան սկզբունքորեն չի ողջունում եվրոպական հարեւանության քաղաքականությունը, քանի որ դա ստեղծում է ոչ հավասար պայմաններ Ռուսաստանի եւ հարավկովկասյան երկրների հետ հարաբերություններում: Մոսկվայում ոգեւորված չեն նաեւ հարավկովկասյան երկրների եւ ՆԱՏՕ-ի հարաբերությունների խորացմամբ: Դեկտեմբերի 9-ին Հայաստանը եւ ՆԱՏՕ-ն սկիզբ դրեցին Անհատական գործընկերության գործողությունների ծրագրին: Վրաստանն ու Ադրբեջանն այս ծրագրին միացել էին ավելի վաղ:

Քոչարյանը Սոչիում կհանդիպի Պուտինի հետ

Հարավային Կովկասում Ռուսաստանի ռազմավարական դաշնակից Հայաստանի՝ եվրասլանսյան կառույցների հետ հարաբերությունների խորացումը Մոսկվայում բնականաբար չեն ողջունում: Վերջերս Մոսկվայում Կրեմլի մի պատշաճական «Ազգի» հարցին, թե ինչպե՞ս են ռուսական շրջանակներն ընկալում Հայաստանի կոմպլեմենտար արտաքին քաղաքականությունը՝ մի կողմից լինել Ռուսաստանի դաշնակից, մյուս կողմից՝ խորացնել հարաբերությունները եվրասլանսյան կառույցների հետ, պատասխանեց. «Դա նույնն է, թե կարագը լուծես ջրում»:

Ենթադրվում է, որ Հայաստանի եվրոպական քաղաքականությունը, ինչպես նաեւ ռուսական գազի հավանական թանկացման խնդիրները քննարկման առարկա կդառնան նախագահներ Ռոբերտ Քոչարյանի եւ Վլադիմիր Պուտինի դեկտեմբերի 16-ին Սոչիում նախատեսված հանդիպմանը: Անշուշտ, առաջին հայացքից գազի գները եւ եվրոպական քաղաքականությունը թվում են ոչ փոխկապակցված, սակայն իրականում եւ մասնավորապես Ուկրաինայի ու Վրաստանի դեպքում Ռուսաստանը վերջիններիս արեւմտամետ քաղաքականությունը փորձում է սանձել ռուսական էներգակիրների թանկացմամբ:

Նախագահներ Պուտինը եւ Քոչարյանն առաջիկայում հանդիպելու եւ մեկ հնարավորություն կունենան Մոսկվայում: Ինչպես **«Ազգի»** հետ զրույցում տեղեկացրեց ՀՀ նախագահի մամլո խոսնակ Վիկտոր Սողոմոնյանը, հունվարի երկրորդ կեսին նախագահ Քոչարյանը Մոսկվայում կբացի Ռուսաստանում Հայաստանի տարին:

ՕՐԱԽՆԳԻՐ

Ներգաղթող հայաստանցիները տառապում են...

1-ին էջից

Դա փոխարեն քննարկվում են ներգաղթի համար պայմաններ ստեղծելու հարցերը, թեպետ ըստ վերջին ուսումնասիրությունների, Հայաստան վերադարձածների մոտ 60 տոկոսը կարճ ժամանակ անց մտածում է նույն երկիր մեկնելու մասին: Պատճառները բոլորիս են հայտնի՝ ապխատատեղի պակաս կամ ցածր ապխատավարձ: Սակայն պատահում են նաեւ արտասահմանում ապխատելու ծանրությունից հոգնածները:

Հմայիչ ու բարետես Լիանան մոր ու եղբոր հետ 11 տարի Վարդավայում ապրելուց հետո այս տարի վերադարձավ Հայաստան: Մեկնեցին դժոխային 1994-ին, ինքը 9-րդ դասարանում էր: «Մայրիկիս հետ ապխատում էինք առավոտյան ժամը 6-ից մինչեւ երեկոյան 18-ը, ամբողջ օրը դրսում առեւտուր էինք անում, շատ դժվար էր, բացի այդ, շատ էի կարոտում Հայաստանը ու որոշեցի վերադառնալ տատիկիս մոտ: Այստեղ, իհարկե, դժվարությունները շատ են, բայց ես չեմ զղջում վերադառնալուս համար, այլեւս ուժ չունեի այնտեղ դիմանալու: Հիմա ապխատում եմ հագուստի խանութում, բայց ապխատավարձս շատ փիչ է, այնտեղից 3 անգամ պակաս: Սովորելու մեծ ձգտում ունեմ, բայց հնարավորություն չունեմ ուման վարձ վճարելու», ասում է Լիանան: Լեհաստանում նրա ծանոթներից շատերը, որ Հայաստան են գալիս գրանցման խնդիրների ճնշմամբ, չեն հարմարվում հայաստանյան կենսամակարդակին ու ձգտում են մեկ այլ երկիր մեկնել:

Ներգաղթողների խնդիրներն անցած տարվանից ուսումնասիրող շվեյցարական «Սիմերա» հասարակական կազմակերպությունը երեկ «Կոնգրես» հյուրանոցում անցկացրեց «Ներգաղթ դեպի Հայաստան. ինչպես նպաստել հայրենիք վերադարձածների վերաինտեգրմանը» քննարկումը, որին հրավիրվել էին ներկայացուցիչներ կառավարությունից, միջազգային եւ հասարակական կազմակերպություններից: Նրանք խոսեցին արտասահմանում հայ միգրանտների կյանքի պայմանների, Հայաստան վերադարձածների վերաինտեգրման ու միայնակ կանանց մասին:

Հայաստանի տարածքային կառավարման նախարարության միգրացիոն գործակալության ներկայացուցիչ Համբարձում Աբրահամյանի ասելով, այլ երկրների սոցիալ-տնտեսական հարաս համակարգից օգտվելու հեռանկարով եւ ապխատանք գտնելու հույսով 1990-ականներից մինչ օրս Հայաստանից հեռացել է մոտ 1 մլն քաղաքացի: Քանի որ նրանցից շատերն աշխատանքային միգրանտներ են, իսկ քաղաքական պաստան ստանալու նրանց խնդրանքը մերժվել է, հետեւաբար պետք է հեռանան այդ երկրներից: Ներկա պահին այդ խնդիրները լուծելու համար միգրացիոն գործակալությունը համագործակցում է եվրոպական մի շարք երկրների հետ:

«Սիմերա» ծրագրի ղեկավար Օղելի Պերենը ներկայացրեց այս տարվա սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին Գյումրիում, Գավառում եւ Գորիսում անցկացված քննարկումների արդյունքները, որոնք բերեցին այն եզրահանգման, որ ի տարբերություն եվրոպական երկրների, Ռուսաստանից վերադարձողների համար վերաինտեգրման ծրագրեր չեն իրականացվում: Թերեւս հենց այդ պատճառով հայաստանցիների գերակշիռ մասը նախընտրում է ապրել այնտեղ, անտեսելով ազգային խտրականության սուր դրսեւորումները, իսկ ընտանիք ունեցող տղամարդիկ փորձում են իրենց կանանց ու երեխաներին ուղարկել Հայաստան:

«Սիմերան» առաջարկում է միգրանտների համար ստեղծել տեղեկատվական ծառայություններ, սկսնակ գործարարներին տրամադրել առանց տոկոսադրույքի վարկեր:

ՀՀ կենտրոնական բանկի հաշվեկշիռը
2005 թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ

Հազար դրամներով

	30.09.05	30.06.05	31.12.04
ԱԿՏԻՎՆԵՐ			
Ակտիվներ ոսկով եւ արտարժույթով			
Կանխիկ դրամական միջոցներ	277,578	316,362	263,649
Օտարերկրյա բանկերի եւ վարկային կազմակերպությունների նկատմամբ պահանջներ	153,490,222	159,819,368	200,665,499
ԱՄՀ-ում հատուկ փոխառության իրավունք	66,766,812	60,213,002	74,997,910
Ներդրումային արժեթղթեր			
-Վաճառքի համար նախատեսված ներդրումներ	1,227	1,221	1,514
-Մինչեւ մարման ժամկետը պահվող ներդրումներ	147,720,763	120,334,155	74,091,282
Այլ արտարժութային ակտիվներ	42,604	1,018,385	1,228,824
	368,299,206	341,702,493	351,248,678
Ակտիվներ ՀՀ դրամով			
Վարկեր եւ այլ պահանջներ	11,952,788	11,955,594	13,020,001
Ներդրումային արժեթղթեր			
-Վաճառքի համար նախատեսված ներդրումներ	7,854,216	2,866,671	8,442,489
Հիմնական միջոցներ եւ ոչ նյութական ակտիվներ	5,598,683	5,612,865	5,621,345
Այլ ակտիվներ ՀՀ դրամով	1,301,126	6,820,338	470,529
	26,706,813	27,255,468	27,554,364
ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ	395,006,019	368,957,961	378,803,042
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Արտարժույթով պարտավորություններ			
Փոխառված միջոցներ			
- Բանկեր եւ վարկային կազմակերպություններ	29,280,878	27,715,322	11,088,132
- ԱՄՀ	82,325,441	84,457,981	104,337,934
- Հայաստանի կառավարություն	12,231,469	4,738,108	13,878,092
Այլ ավանդային հաշիվներ արտարժույթով	1,877,992	506	154,751
Այլ պարտավորություններ արտարժույթով	828,555	100,066	43,970
	126,544,335	117,011,983	129,502,879
ՀՀ դրամով պարտավորություններ			
Շրջանառության մեջ թղթադրամներ եւ մետաղադրամներ	132,209,580	113,392,048	105,533,669
Փոխառված միջոցներ			
- Բանկեր եւ վարկային կազմակերպություններ	23,002,642	28,277,745	28,436,945
- ԱՄՀ	59,238,775	60,186,409	70,244,915
- Հայաստանի կառավարություն	54,771,394	61,513,073	42,610,033
Այլ ավանդային հաշիվներ ՀՀ դրամով	1,193,022	1,300,577	1,184,367
Թողարկված արժեթղթեր	13,586,148	3,457,486	-
ՀՀ դրամով այլ պարտավորություններ	182,962	203,975	225,823
	284,184,523	268,331,313	248,235,752
Ընդամենը պարտավորություններ	410,728,858	385,343,296	377,738,631
ԿԱՊԻՏԱԼ			
Կանոնադրական կապիտալ	100,000	100,000	100,000
Գլխավոր պահուստ	9,870,486	9,870,486	9,870,486
Կուտակված շահույթ/(վնաս) եւ այլ պահուստներ	(25,693,325)	(26,355,821)	(8,906,075)
Ընդհանուր կապիտալ	(15,722,839)	(16,385,335)	1,064,411
ԸՆԴԱՄԵՆԸ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	395,006,019	368,957,961	378,803,042

Հայաստանի Հանրապետության միջազգային պահուստների վիճակը եւ կազմը

ՀՀ կենտրոնական բանկը, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 52-րդ հոդվածի դրույթներով, ներկայացնում է

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության միջազգային պահուստների վիճակի եւ կազմի մասին 2005թ 3-րդ եռամսյակ (ներառյալ եզրափակիչ շրջանառությունը)

Եռամսյակի սկիզբ

I.Համախառն արտաքին ակտիվներ	632,070,194.79	ԱՄՆ դոլար
այդ թվում՝ միջազգային պահուստներ (համախառն արտաքին ակտիվներ ազատ փոխարկելի արժույթով)	632,005,105.55	ԱՄՆ դոլար
որից՝ ՀՓԻ ԱՄՀ-ում 1,439,159.00 ՀՓԻ	2,096,298.16	ԱՄՆ դոլար
պահուստային դիրք ԱՄՀ-ում 0 ՀՓԻ	0.00	ԱՄՆ դոլար
եկամտաբեր միջոցներ	631,352,232.52	ԱՄՆ դոլար
սեփականաշնորհման միջոցներ	10,206,856.72	ԱՄՆ դոլար
համախառն արտաքին ակտիվներ առանց սեփականաշնորհման միջոցների	621,863,338.07	ԱՄՆ դոլար
որից միջազգային պահուստներ առանց սեփականաշնորհման միջոցների	621,798,248.83	ԱՄՆ դոլար
II.Համախառն արտաքին պարտավորություններ	213,723,968.79	ԱՄՆ դոլար
որից համախառն արտաքին պարտավորություններ ազատ փոխարկելի արժույթով	213,684,598.83	ԱՄՆ դոլար
III.Զուտ արտաքին ակտիվներ առանց սեփականաշնորհման միջոցների	408,139,369.28	ԱՄՆ դոլար
որից՝ ազատ փոխարկելի արժույթով	408,113,650.00	ԱՄՆ դոլար
ոչ փոխարկելի արժույթով	25,719.28	ԱՄՆ դոլար
Եռամսյակի վերջ I.Համախառն արտաքին ակտիվներ	688,988,082.79	ԱՄՆ դոլար
այդ թվում՝ միջազգային պահուստներ (համախառն արտաքին ակտիվներ ազատ փոխարկելի արժույթով)	688,943,003.23	ԱՄՆ դոլար
որից՝ ՀՓԻ ԱՄՀ-ում 11,657,973.00 ՀՓԻ	16,897,817.11	ԱՄՆ դոլար
պահուստային դիրք ԱՄՀ-ում 0.00 ՀՓԻ	0.00	ԱՄՆ դոլար
եկամտաբեր միջոցներ	688,360,439.41	ԱՄՆ դոլար
սեփականաշնորհման միջոցներ	27,023,523.40	ԱՄՆ դոլար
համախառն արտաքին ակտիվներ առանց սեփականաշնորհման միջոցների	661,964,559.39	ԱՄՆ դոլար
որից միջազգային պահուստներ առանց սեփականաշնորհման միջոցների	661,919,479.83	ԱՄՆ դոլար
II.Համախառն արտաքին պարտավորություններ	205,936,274.78	ԱՄՆ դոլար
որից համախառն արտաքին պարտավորություններ ազատ փոխարկելի արժույթով	205,897,070.55	ԱՄՆ դոլար
III.Զուտ արտաքին ակտիվներ առանց սեփականաշնորհման միջոցների	456,028,284.62	ԱՄՆ դոլար
որից՝ ազատ փոխարկելի արժույթով	456,022,409.28	ԱՄՆ դոլար
ոչ փոխարկելի արժույթով	5,875.34	ԱՄՆ դոլար

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-24-63

Լրատուական գործունեություն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետության 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրված՝ 17.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիսեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրված է տպագրության՝ 13.12.2005, գինը՝ 100 դրամ, տպագրում է «Գինդ» տպագրատանը: